AZG NEW 1.QXD 6/25/2009 11:07 PM Page 1

Ազգ
Azg
26 ՅՈՒՆԻՍ 2009 ՈՒՐԲԱԹ 118 (4254)
ISSN: 1829-1651

## Սեյսմիկ կայանները գրանցել են 3 բալ եւ ավելի ուժգնությամբ 5 երկրաշարժ

ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանում հունիսի 18-24-ը գրանցել են 3 բալ եւ ավելի ուժգնությամբ 5 երկրաշարժ: Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրին ՍՊԱԾ գործակալությունից, հունիսի 18-ին` ժամը 12 անց 34 րոպեին, Գառնի գյուղից 12 կմ դեպի հյուսիս-արեւելք տեղի է ունեցել 4-5 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Այս երկրաշարժին նույն օջախային գոտում հետեւել են բազմաթիվ աննշան հետցնցումներ` հունիսի 18-ին ու 22-ին` 3 բալ, հունիսի 21-ին` 4 եւ 3 բալ ուժգնությամբ: Տարածաշրջանում 3 բալ ու ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել 6 երկրաշարժ:

## Լարվածությո՞ւն, թե՞ լարվածության իմիտացիա` դադարից առաջ



Հանկարծ ու պարզ դարձավ, թե ինչու էր ուշացնում հայրենի իշխանությունը համաներումը: Պարզվեց` անհիմն չէ նրա վախը, թե ազատազրկվածներին արձակելը անշնչացած ընդդիմությանը երկրորդ շնչառություն կարող է տալ, որոնք արհեստականորեն ինքնաբորբոքվելով` չեղած տեղը նորից արյուն են պղտորելու:

Ճիշտ որ` հենց այդպես էլ կա, մարդիկ ազատվել են, փոխանակ գնան տուն, մտորեն իրենց հետագա` աշնանային անելիքի մասին, դեռ արտահերթ հանրահավաք են նշանակում, որի ժամանակ երեւի ուզում են պարզել` ամփոփե՞ն համաներման արդյունքում ստեղծված «նոր» իրավիճակը, մի քիչ էլ ռեժիմի նման ձգեն, մի փոքր էլ հեղափոխական երգեր երգե՞ն (եթե, իհարկե, համեմատաբար կրիտիկական ընտրազանգված ունենան), թե՞ հրաժեշտ տան եւ իսկապես գնան մտորելու: Հին անեկդոտ կա փոսն ընկածի մասին, որն իրեն մխիթարում է. «Մի անգամ էլ փորձեմ դուրս գալ փոսից, չստացվեց` կգնամ տուն»: Տես էջ 2



## 1677 ԵԽԽՎ նոր բանաձեւը Հայաստանին` ի կատարումն

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը հունիսի 24-ի նիստին ներկա 41 պատգամավորի պարագայում 37 կողմով ընդունեց Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների վերաբերյալ նոր` 1677 բանաձեւը: Բանաձեւի նախագիծն «**Ազգը**» մանրամասն ներկայացրել է: Նշենք, որ գրեթե չի փոխվել, թերեւս կարեւոր հավելմամբ, որ վեհաժողովը հետեւողական է լինելու համաներումից դուրս մնացած մարտյան իրադարձություններին առնչվող գործերի քննությանը:

Առավել հետաքրքրական է, որ համաներումն, ըստ էության, չորոշեց իրավիճակի ելքը այնքանով, որ ԵԽԽՎ-ն դա բավարար չի համարել, ու դեռ սեպտեմբերին ակնկալում են Ա0 մարտի 1-2-ի իրադարձությունների հարցերով ժամանակավոր հանձնաժողովի զեկույցը, որը մեծ նշանակություն կունենա նախ մոնիտորինգի հանձնաժողովում Հայաստանի հարցով համազեկուցողներ Ժորժ Կոլոմբիեի եւ Ջոն Պրեսկոտի զեկույցը կազմելիս:

Այս ամենով հանդերձ, ամրագրվեց, որ կա առաջընթաց, բայց դրանից էլ շատ դեռ լուծելիք խնդիրներ կան: Իսկ թե ԵԽԽՎ բանաձեւերից դուրս Հայաստանում ժողովրդավարություն ասվածին հասնելու համար ինչքան խնդիրներ կան` դժվար է հաշվել;

Ա. Հ.

## «Առանց Ադրբեջանի Թուրքիան Հայաստանի հետ քաղաքականություն չի իրագործի»

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն, մասնակցելով թուրքական խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստին, պատգամավորներին «տեղեկություններ է հայտնել` կապված նոր ժամանակաշրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության ընկալման հետ»: Դավութօղլուն թուրք պատգամավորներին հավաստիացրել է, որ «առանց Ադրբեջանին ուշադրության առնելու Թուրքիան Հայաստանի հետ քաղաքականություն չի իրագործի»: «Թուրք-հայկական սահմանի բացումը խնդիր է դառնում, բայց այն բաց էր մինչեւ 1993-ը», ասել է Դավութօղլուն, հավելելով, որ Երեւանի հետ Անկարայի հարաբերությունները «առանց Բաքվի չեն զարգանա»: Թուրքական նոր արտաքին քաղաքականության ընկալումը Դավութօղլուն պատգամավորներին բացատրել է «Թուրքիայի շուրջ հազար մղոնանոց շրջանում գտնվող ամեն հարց հետաքրքրում է Անկարային» արտահայտությամբ, հաղորդում է «Արմենպրեսը»:

## Ռոքսանա Սաբերին կոչ է անում Իրանին ազատ արձակել Սիլվա Հարությունյանին

Ըստ PanArmenian.net-ի, ԱՄՆ լրագրող Ռոքսանա Սաբերին կոչ է արել իրանական իշխանություններին ազատ արձակել Թեհրանում մեկ տարի առաջ ձերբակալված IREX հասարակական կազմակերպության աշխատակցուհի Սիլվա Հարությունյանին: Ինչպես հայտարարել է Սաբերին Փարիզում` մամլո ասուլիսի ժամանակ, Իրանի իշխանությունները անօրինական կերպով Հարությունյանին կալանքի տակ են պահում: «Ես գիտեմ, որ Սիլվան մեղավոր չէ, ես տեսել եմ դատարանի եզրակացությունը եւ «մեղադրական փաստաթղթերը», Փարիզում հայտարարել է Իրանում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կազմակերպության ղեկավար Խադի Հաեմին: Ինչպես հայտնել է ֆրանսիացի լրագրող Ժան Էքսիյանը, Սիլվա Հարությունյանի պաշտպանության ասուլիսը կայացել է Փարիզում:

## Համաներմամբ հունիսի 24-ի դրությամբ ազատ է արձակվել 200 մարդ

Արդարադատության նախարարությունից հաղորդում են, որ ԱԺ-ի հունիսի 19-ի «Համաներում հայտարարելու մասին» որոշման համաձայն, արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից հունիսի 24-ի դրությամբ ազատ է արձակվել 200 դատապարտյալ: Որոշման 7-րդ կետի համաձայն, կրճատվել է 5 դատապարտյալի պատժի չկրած մասը:

## «Բաց երկինք» Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ

Նախօրեին ուժի մեջ մտավ անցյալ տարվա նոյեմբերին ստորագրված պայմանագիրը Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ օդային հաղորդակցության ազատականացման կամ, ինչպես ասում են, «բաց երկնքի» մասին:

Հիշեցնենք, «բաց երկնքի» քաղաքականությունը նշանակում է, որ վերացվում են ավիացիոն մուտքի կառավարությունների սահմանափակումները, ինչպես նաեւ նստատեղերի քանակի եւ բեռնափոխադրման սահմանափակումները: Շուկա մուտք գործելու հնարավորություններ են ստանում նոր փոխադրողներ, մրցակցություն է առաջանում, սպառողներին մատուցվում են որակյալ եւ ավելի ցածր գներով ծառայություններ:

Նշենք, որ Հայաստանի ազգային ավիափոխադրող «Արմավիային» կառավարությունը տվել է որոշակի բացառիկ իրավունքներ, որոնք պետք է վերացվեն 2013-ին: ԱՄՆ հետ համաձայնագրի կնքմամբ նման բացառիկ իրավունքներ ազգային ավիափոխադրողը փաստորեն այլեւս չի ունենում:

Ա. Մ.

## Ուզբեկստանի սահմանապահ ուժերը ձերբակալել են ՀՀ քաղաքացու

**Ուզբեկստանի սահմանապահ ուժերը Տաշքենդի օդանավակայանում ձերբակալել են Հայաստանի քաղաքացի Գ. Մ.-ին, որը փորձել է ապօրինի ճանապարհով Ուզբեկստան ներմուծել մեծ քանակությամբ` 2,5 կգ ոսկեղեն: Ուզբեկստանի սահմանապահ ուժերի վարչության մամլո ծառայության ներկայացուցիչը լրատվամիջոցներին տեղեկացրել է, որ Հայաստանի քաղաքացին Ուզբեկստան է եկել Մոսկվա-Տաշքենդ ավիաչվերթով եւ օդանավակայանում մոտեցել սահմանապահ հսկողության անցակետին: «Սահմանապահների հրահանգը` ուղեբեռը ներկայացնել անցակետի աշխատակիցներին, նրա համար եղել է անսպասելի, քանի որ այնտեղ էր գտնվում է 2,5 կգ ոսկեղենը, որը չէր ներկայացվել արձանագրության մեջ», ասել է սահմանապահ վարչության ներկայացուցիչը, հաղորդում է «Արմենպրեսը»:**

## Հաստատվել է միասնական լրացուցիչ քննությունների ժամանակացույցը

**ԿԳ նախարարությունն արդեն հաստատել է միասնական լրացուցիչ քննությունների ժամանակացույցը: Ինչպես տեղեկացրին Գնահատման եւ թեստավորման կենտրոնից, հուլիսի 4-ին տեղի կունենան կենսաբանություն, աշխարհագրություն, ընդհանուր պատմություն առարկաների միասնական լրացուցիչ քննությունները: Հուլիսի 6-ին նախատեսված է հայոց լեզու, գրականություն, իսկ 8-ին` մաթեմատիկա առարկաների լրացուցիչ քննությունը: Օտար լեզուներից երկրորդ փուլի քննությունը կլինի հուլիսի 10-ին, ֆիզիկայից` 12-ին, հայոց պատմությունից եւ քիմիայից` 14-ին: Ռուսաց լեզվի քննությունը կանցկացվի հուլիսի 16-ին: Հունիսի 24-ից Գնահատման եւ թեստավորման կենտրոնը սկսել է այս առարկաների պետական ավարտական եւ միասնական լրացուցիչ քննությունների հայտագրման գործընթացը, որը կավարտվի հուլիսի 2-ին:**

## Փոխնդային սակարանում

**Հունիսի 25-ին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում իրականացվել է 4.000.000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք` 360.52 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին կշռված փոխարժեքով: Փակման գինը կազմել է 360.50 դրամ:**

## Բարեգործությունից անցում` մշակույթի եւ գիտության խթանմանը

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ



Երեկ ՀԳԱ ակադեմիայի նախագահության դահլիճում տեղի ունեցավ Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության փոխնախագահներ Արամ Սարգսյանի ու Վլադիմիր Աղայանի եւ Հայաստանում գործող ստեղծագործական միությունների ղեկավարների կլոր սեղան-քննարկումը, որի ընթացքում ներկայացվեց 2009-ին անցկացվող մրցանակաբաշխության նախագիծը: Քննարկումը բացեց պրն Աղայանն ու տեղեկացրեց, որ թվով երրորդ մրցանակաբաշխությունն առանձնահատուկ է եւ այս անգամ հայտարարվել է համահայկական ու անցկացվելու է սփյուռքի, մշակույթի եւ գիտության, կրթության նախարարությունների հետ համատեղ: «2007-ից սկիզբ առած մրցանակաբաշխությանը մասնակցում էին ՀԳ միությունը եւ Ժուռնալիստների միությունը: Իսկ 2008-ին դրանց թիվն ընդլայնվեց` ներառելով Կոմպոզիտորների, Նկարիչների միություններն ու ՀԳԱ ակադեմիան: Այս տարի ավելացել է նոր մրցանակ` «Ջիվան Գասպարյանի» անվան դուդուկի մրցույթ, որն ազգային երաժշտական գործիքների լավագույն կատարողներին ի հայտ բերելու համար է նախատեսվել»: Պրն Աղայանը նշեց, որ բազմաթիվ մշակութային միություններից եղել են առաջարկներ նոր անվանակարգեր ընդգրկել մրցույթում, որոնք քննարկման փուլում են: Նա շեշտեց, որ եթե մի ժամանակ նման նախաձեռնությունները հետապնդում էին բարեգործական նպատակ, այժմ դրանց նպատակն է մշակույթի եւ գիտության խթանումը` վարակիչ օրինակ հանդիսանալով բիզների այլ ներկայացուցիչների համար:

Տես էջ 2

# «Արմենիան» չակերտներում էլ Հայաստան է

«Արմենիա» առագաստավոր զբոսանավի վրա բացում եմ հին Հայաստանին նվիրված մի մենագրություն. «Հայերը մ. թ. ա. 3-2-րդ հազարամյակներում ձեւավորված առաջավորասիական հնագույն բնիկ ժողովուրդ են: Դարեր շարունակ հայերի բնակության տարածքը համընկել է Հայկական լեռնաշխարհի եւ պատմական Հայաստանի տարածքին... Մ. թ. ա. 3-րդ դարից այդ տարածքը իր ծայրամասային շրջանների հետ հայտնի էր Մեծ Հայք անունով՝ ի տարբերություն մյուս հայկական տարածքի՝ Փոքր Հայքի, որը գտնվում է Եփրատի եւ Անտիտավրոսի միջեւ»:



Բախվում երբեմն խոսում են Մեծ Հայք ստեղծելու հայերի զառանցական ծրագրերի մասին: Բայց պետք է գրել Մեծ Հայքի ոչ թե ստեղծման, այլ վերածննման մասին: Մեծ Հայք եւ Փոքր Հայք տերմինները առկա են ոչ միայն պատմաբանների գործերում, այլեւ բոլոր հանրագիտարանային բառարաններում:



Ինչ վերաբերում է «Արմենիա» առագաստանավին, դրա երկարությունը 19,73 մետր է, ամենալայն մասը՝ 6,02 մետր, նավակողի բարձրությունը՝ 1,2 մետր, թաղվածքը՝ 2,47 մետր, ջրատարողությունը՝ 44 տոննա:

«Արմենիան» միակայմ շլյուպ (առագաստանավ) է: Շլյուպները լինում են տարբեր, այդ թվում՝ եռակայմ: Միակայմ շլյուպը ամենատարածված փոքր մարզական առագաստանավն է: «Արմենիայի» կայմի բարձրությունը մոտ 30 մետր է: Կայմի երկու կողմերից դեպի նավակողեր իջնում են ձիգ պողպատե ճոպաններ: Քիչ ավելի ցածր իջնում են հիմնական ճոպանները: Կայմի ծայրից ճոպաններ են իջնում նաեւ դեպի նավախել եւ նավաքիթ: Հատուկ սարքերով «Արմենիայի» առագաստները բարձրացվում եւ իջեցվում են հաշված րոպեների ընթացքում: Կայմի ներքեւում ամրացված հորիզոնական զանգվածեղ հեծանի վրա հավաքվում է եռանկյունաձեւ գլխավոր առագաստի՝ գրոտի հիմքը: Գրոտը եւ առջեւի երկու փոքր առագաստները բարձրացնելիս «Արմենիան» շարժվում է մինչեւ 13 հանգույց արագությամբ: Այդ արագության մասին երազում էր «Կիլիկիայի» նախկին եւ «Արմենիայի» ապագա նավապետ Սամվել Կարապետյանը:

Ըստ որում, մեր հույսը ոչ թե պատահական քամիներն են, այլ օվկիանոսների արեւադարձային լայնություններում տարվա ընթացքում օդային զանգվածների կայուն տեղաշարժերը: Մեր առագաստանավը գրեթե ամբողջապես կազմված է ձվաձեւ մակերեւույթներից, որոնք դյուրացնում են նավի ընթացքը:

Օգնում է նաեւ տիեզերական նավիգատորը, որը, ինչպես եւ «Կիլիկիայի» դեպքում, թույլ չի տալիս շեղվել երթուղուց: «Արմենիայի» առագաստները կարելի է կառավարել հենց ղեկի մոտից: Բայց արագությունն անհնար է առանց անձնակազմի համաձայնեցված գործողությունների, մանավանդ՝ փոթորիկի ժամանակ:

Տախտակամածի վրա ունենք փչովի մոտորանավակ, իսկ նավամբարներում դրված են նավահանդերձանք, պարանասարքեր, սննդամթերք, խմելու ջրի բաքեր, գրքեր: Յոթ հոգանոց անձնակազմը նավարկում է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների, Հայաստանյայց առաքելական եկեղեցու դրոշներով: «Արմենիայի» գրանցման «նավահանգիստը» Երեւանն է: Ամեն ինչ տրամաբանական է եւ բնական: Վերջին հաշվով, «Արմենիան» չակերտներում էլ Հայաստան է:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**
**Ատլանտյան օվկիանոս, «Արմենիա» առագաստանավ**

# Լարվածությո՞ւն, թե լարվածության իմիտացիա՝ դադարից առաջ

*1-ին էջից*

**Այսպես, թեեւ ԵԽԽՎ-ն ընդհանուր առմամբ բարենպաստ բանաձեւ է ընդունել Հայաստանի ժողովրդավարական հաստատությունների վերաբերյալ, բայց ընդդիմության ինքնաբորբոքման համար էլ մի քանի կետ կա, որոնց շուրջը դեռ մեր հեղափոխականները հուսով են միտք խթանել: Օրինակ՝ ԵԽԽՎ-ն կոչ է անում հետախուզման մեջ գտնվող անձանց հետագայում դատավարության ընթացքում ազատությունից չզրկել (ահա, թե ինչ հիմքով էր Նիկոլի հայտարարությունը), մարտի 1-ի դեպքերի անկախ եւ արժանահավատ հետաքննություն անցկացնել (դատախազությո՞ւնը դա կանի, թե՞ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովը՝ երկուսից էլ ԵԽԽՎ-ն հույսը չի կտրում), Ա1+-ը բացել. ասված, չի լինի՞ էդ Ա1+-ին իշխանությունը եթեր տա-պրծնի, թող ընդդիմությունն այնտեղ ուղիղ եթերներում ինչքան սիրտը կուզի՝ ամեն օր միտինգ անի: Իսկ դե՝ մարտի 1-2-ի իրադարձությունների հետեւանքով զոհված 10 անձանց մահվան հանգամանքները, համաձայն ենք ԵԽԽՎ-ի հետ, պետք է քաջություն ունենանք՝ դատախազությունով է, մարտի 1-ի ժամանակավոր հանձնաժողովով է, ինչ է՝ բացահայտենք:**

**Սա՝ ընդդիմության մասով:**

**Իշխանական մասով էլ բավական կերակուր կա՝ «Ժառանգությունը» ներկայացնող Զարուհի Փոստանջյանը ադրբեջանցիների ու թուրքերի օգնությանն է դիմել՝ բանաձեւում իր ուզած փոփոխություններին հասնելու համար, բոժե մոյ, էդ աղջիկը գժվե՞լ է, բա մոռացա՞վ Րաֆֆու հայրենասիրական ճառերը: Մի տասը օր ասուլիս ու դատափետումով վառ կպահվի այդ թեւի ընդդիմության օրակարգային փնովումը՝ ահա քեզ աստծու տված նյութ: Ու արդեն դա տեղի է ունենում՝ Գալուստ Սահակյանը կանացի անբարո սեթեւեթանք, Արամ Սաֆարյանը՝ ռացիոնալ ու բանական բացատրություն չունեցող, Արտյուշա Շահբազյանը՝ արտառոց են համարել նման պահվածքը, քանի որ ադրբեջանցիները սովորաբար հակահայկական բանաձեւերի տակ են ստորագրում: Դե, Զարուհի Փոստանջյանի ավելորդ էքսցենտրիզմը չգիտենք, բայց որ նա իր իսկ լարած ծուղակն է ընկել՝ շատ ցանկանալով բոլոր միջոցներով իրականացնել իր առաջարկները՝ սա՝ հաստատ: Իսկ ադրբեջանցիներին էլ մի ասող լինի՝ այ երեսպաշտներ, գնացեք ու վախից դողացող, բարձրաձայն կարծիք չհայտնող ձեր ընդդիմադիրների ազատության համար թուղթ ստորագրեք, որոնց կեսը վախից ծակից դուրս չի գալիս, կեսն էլ տարբեր քրեական եւ վարչական հոդվածներով բանտերում է, մինչդեռ Հայաստանում ով ինչ ուզում-խոսում է, ու նույնիսկ ձեր օգնությանը դիմած պատգամավոր ունենք:**

**Այսինքն՝ բանտից համաներմամբ դուրս եկածների, ԵԽԽՎ նոր բանաձեւի որոշ դրույթների թեմաների դեռ մի երկու շաբաթ լարվածության իմիտացիա կա:**

**Իրական լարվածության լիցք կար երեկ, բայց լրիվ անսպասելի ուղղությունից, երբ «Արմենիա-Մարիոթի» դիմաց Վրաստանի նախագահին հասցեագրված հայ երիտասարդների եւ հասարակական կազմակերպությունների ցույցը ոստիկանության կողմից քաշքշվեց: Երեւում է՝ մեր ոստիկանությունն այնքան է հմտացել ցույց ցրելու ուղղությամբ, որ էլ չի ջոկում ինչ ցույց է ցրում՝ մարդկանց մեծ խումբ տեսնելը մեր ոստիկանների վրա ունենում է նույն ազդեցությունը, ինչ կարմիր լաթը՝ ցուլի վրա: Տնաշեններ, չե՞ք հասկանում՝ ինչ եք անում: Մի անգամ անհաջող ելքով ցույց ցրեցիք՝ չխրատվեցի՞ք, հիմա նույնիսկ ազգային խնդիր բարձրացնող ցույցն է ձեզ վրա ազդո՞ւմ: Չէ, մեր ոստիկանությանը շտապ «թրեյնինգներ» եւ մասնագիտական սեանսներ են հարկավոր, հատկապես՝ հոգեբանի ծառայություն:**

**ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

# Բարեգործությունից անցում՝ մշակույթի եւ գիտության խթանմանը

*1-ին էջից*

Քննարկմանը ներկա էին նաեւ ՀՀ մշակույթի փոխնախարար Դավիթ Մուրադյանը եւ սփյուռքի փոխնախարար Ստեփան Պետրոսյանը, որոնք էլ բարձր գնահատելով Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության ազգանվեր գործունեությունը, խոստացան աջակցել ու արեցին մի շարք կարեւոր առաջարկներ թե՛ անվանակարգերի եւ թե՛ մրցույթի անցկացման նոր ձեւի վերաբերյալ:

Այնուհետեւ ԺՄ նախագահ Աստղիկ Գեւորգյանը, Նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը, ԳՄ նախագահ Լեւոն Անանյանը, Կոմպոզիտորների միության նախագահ Ռոբերտ Ամիրխանյանը, ՀԳԱ ակադեմիայի բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վիլեն Հակոբյանը եւ ուրիշներ ներկայացրին իրենց բնագավառներում հայտարարված մրցույթների ցանկում նորություններն ու փոփոխությունները, արեցին օգտակար առաջարկներ:

Պրն Աղայանը նշեց, որ 2010-ին ՌՀՄ 10-ամյակն է, 2009-ի մրցանակաբաշխությունը համընկնում է այդ կարեւոր տոնակատարության հետ, ու ինչպես արդեն հայտարարել է Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, մրցանակակիրները կհրավիրվեն Մոսկվա՝ Համագումարների պալատ, որտեղ տեղի կունենա հոբելյանական հանդիսավոր նիստը, որի ընթացքում էլ նրանց կհանձնվեն մրցանակները: Արդեն իսկ ստացվել են առաջարկներ, նշեց պրն Աղայանը, որ 2009-ի մրցանակաբաշխությունը նվիրվի միության 10-ամյակին:

Ճանաչված ու սիրված դուդուկահար Ջիվան Գասպարյանը շնորհակալություն հայտնեց Արա Աբրահամյանին՝ լայնածավալ կարեւոր գործունեության ու «Ջիվան Գասպարյան» դուդուկի միջազգային մրցույթ անցկացնելու որոշման համար: «Նման մրցույթ անցկացնելու նպատակն այն է, որ 1956-ից հետո Հայաստանում նման միջազգային մրցույթ երբեւէ չի եղել: Այսօր մենք ունենք բավականին շնորհալի երիտասարդներ, որոնք, ցավոք, շեղվել են ազգայինից, ու ճիշտ կլինի, որ ամեն տարի մի ասպարեզից անցկացվի մրցույթ, որպեսզի լավերն առանձնանան ու հենց նրանք էլ երիտասարդ սերնդին ուղղորդեն ճիշտ ճանապարհով»:

Սփյուռքի փոխնախարար պրն Պետրոսյանը՝ բարձր գնահատելով նման բազմաժանր մրցույթ անցկացնելու նախաձեռնությունը, նշեց. «Մենք համոզված ենք, որ այն կբերի մրցույթի գիտական եւ մասնագիտական մակարդակի բարձրացմանը, եւ բացի այդ՝ դառնալով համահայկական, կնպաստի Հայաստան-սփյուռք կապերի խորացմանը, հայտնաբերելու գիտության եւ մշակույթի ոլորտներում առկա մեր ներուժը, ինչպես նաեւ կնպաստի ներգաղթին ու որոշ չափով կկանխի ուղեղների արտահոսքը Հայաստանից»:

Պրն Սարգսյանը պարզաբանելով մրցույթի հետ կապված մի շարք բարձրացված հարցերը, նշեց. «Մենք պիտի խրախուսենք՝ որ իրոք ներկայացվեն այնպիսի գործեր, որոնք անհրաժեշտ են ու համապատասխանում են չափանիշներին: Մենք ավելացնում ենք եւս մեկ անվանակարգ մրցույթում, որն արդեն իսկ համաձայնեցվել է սփյուռքի նախարարության հետ համատեղ անցկացնել. «Հայապահպանության գործում ունեցած մեծ ավանդի համար», որն ունի առանձին անվանակարգեր՝ լավագույն համայնք, կրթօջախ, լրատվամիջոց, թատրոն, ակումբ եւ այլն, նաեւ մեկ անվանակարգ՝ «Հայ ժողովրդի բարեկամ», որը կտրվի այն անձին, որը մեծ ավանդ է բերել հայրենիքին»:

Հաջորդ շաբաթ մամուլով եւ էլեկտրոնային տարբերակով մրցույթի կարգն ու անվանակարգերը կներկայացվեն, իսկ սփյուռքի կառույցներին կուղարկվի ամբողջական փաթեթը:

# Դաժան հաշվեհարդար

Հունիսի 24-ի երեկոյան Գավառի Բոշնաղյան փողոցի շուկայի դիմաց, անհայտ անձինք մահակով ծեծել են 44-ամյա Անդրանիկ Մարտիրոսյանին (հանցավոր աշխարհում հեղինակություն ունեցող «բիջ Անդո»), նստել են առանց պետհամարանիշի արտասահմանյան արտադրության ավտոմեքենան եւ դիմել փախուստի: Անդրանիկին դեպքի վայրից հեռացրել են անհայտ ուղղությամբ եւ օգնության համար բուժհիմնարկներ չեն դիմել: Դեպքի վայրից հայտնաբերվել է 9 մմ տրամաչափի փամփուշտի 1 պարկուճ:

Կեսգիշերին մոտ, Երեւանի օրթոպեդիայի եւ վնասվածքաբանության կենտրոն է տեղափոխվել ձախ ազդրի հրազենային վնասվածքով, ձախ ազդրի միջին երրորդական բեկորային կոտրվածքով, տրավմատիկ երկրորդ եւ երրորդ աստիճանի շոկ ախտորոշմամբ անձը չպարզված մոտ 50 տարեկան տղամարդ, որն ի վիճակի չի եղել հայտարարություն տալու:

Պարզվել է, որ տուժածը հենց Անդրանիկ Մարտիրոսյանն է, որը հունիսի 25-ին, ժամը 01.00-ին հիվանդանոցում գիտակցության չգալով մահացել է: Հանգամանքները պարզվում են: Կատարվում է նախաքննություն:

**Ս. ՄԱԿԱՐՅԱՆ**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 6/25/2009 9:39 PM Page 1



ԱԶԳ **Անցուդարձ**

# Սաակաշվիլին համալսարանում

## *Կամ ինչպես խոսել, որ բոլոր ասածները լինեն Ռուսաստանի մասին*

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին երեկ ավարտեց իր պաշտոնական այցը Հայաստան: Հընթացս Երեւանի պետական համալսարանի պատվավոր դոկտոր դառնալով եւ ոսկե մեդալ ստանալով (ԱՄՆ-ում դեռեւս ուսանելիս Սաակաշվիլին, իր իսկ խոսքերով, ցանկացել է գիտությամբ զբաղվել, ուստի գնահատում է դոկտորի կոչումը - Ա.Հ.), Վրաստանի նախագահը ուշադիր լսեց ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի իրեն ուղղված ելույթը՝ ինչ լեզվով են խոսում: Սա՝ իմիջիայլոց:

Իսկ ընդհանրապես Սաակաշվիլու խոսքը համալսարանների համար ինչին էլ վերաբերեր, ավելի շատ Ռուսաստանի մասին ու այդ երկրի դեմ էր: Քանի խոսում էր «ագրեսորից եւ օկուպանտից», կոնկրետ նշվում էր Ռուսաստանը, իսկ երբ Սաակաշվիլին անդրադարձավ հայ եւ վրացի ժողովուրդների կրած կորուստներին, այդ առումով նշեց «մեկ այլ օտար երկիր»՝ չգիտես ին- երկրից, ամեն թերություն առնչելով Ռուսաստանին, մնացյալն իրենց ձեռքբերումներ որակեց: Իսկ որ Հայաստանի բեռների տարանցման գները բարձր են, չհամաձայնեց, ասելով թե վրացական երկաթուղին հայկական տարանցման վրա գումար գրեթե չի աշխատում: Դե, Վերին Լարսը ռուսներն են փակել, աբխազական երկաթուղին էլ Ռուսաստանը չուզեց գործարկել:

Իսկ ավարտին Վրաստանի նախագահը «բացահայտեց», որ, ըստ հայ-վրացական հարաբերությունների «դարավորության» ներկայացմամբ:

Որքան էլ անսպասելի էր, այնուամենայնիվ, ԵՊՀ ռեկտորի խոսքում անդրադարձ կար իր ժամանակին Թբիլիսիում հայերի մեծամասնություն լինելու, Վրաստանում հայության թվի կրճատման, միայն մայրաքաղաքում ավելի քան 30 հայկական եկեղեցիների ժամանակին գործելու, Թբիլիսիի Ս. Նորաշեն եկեղեցում Հովնաթան Հովնաթանյանի մանրանկարչության հանգամանքներին:




Ինչեւէ, Վրաստանի նախագահն իր ելույթում նախ հայտարարեց, թե Վրաստանը էթնիկ պատկանելությամբ չի բաժանվում, մինչդեռ դժվար թե Միխեիլ Սաակաշվիլին չի հիշում, օրինակ, իրենից ոչ շատ առաջ նախագահած Զվիադ Գամսախուրդիայի կարգախոսները: «Վրաստանը հավասարապես բոլորինն է», հայտարարեց ԵՊՀ-ում Միխեիլ Սաակաշվիլին, եւ ինչպես ասում են, լեզուն ինչ ասես կասի:

Էսպերանտոյի նման հայերի եւ վրացիների միջեւ Թբիլիսիի ժամանակի հայկական թաղամաս «Հավլաբարի լեզուն» կիրառելը գրավիչ գաղափար է կարծես թվում Սաակաշվիլուն, քանի որ Հայաստան երկօրյա այցի ընթացքում Վրաստանի նախագահը մեկ անգամ չէ, որ այդ մասին նշել է: Շատ լավ է, որ վրաց նախագահը լեզվական ընդհանրություն է ուզում ունենալ իր հարեւանի հետ, բայց, ասում են, երբ մարդիկ ուզում են միմյանց հասկանալ, բնավ էլ կարեւոր չէ, թե չու խուսափելով (իսկ գուցե վախենալո՞վ - Ա.Հ.) գոնե Օսմանյան կայսրություն անվանել 20-րդ դարասկզբի հանցագործ պետությունը:

Ինչ վերաբերում է Ջավախքին, ապա, Սաակաշվիլու ներկայացմամբ, այնպիսի տպավորություն կարող էր ստեղծվել, թե Վրաստանը միայն աշխատում է ու «հոգում» Ջավախքի կարիքները: Վրաստանի նախագահը հավաստիացրեց, որ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի համար արվում է ավելին, քան մյուս տարածաշրջաններում, «երկաթգիծ է կառուցվում, ճանապարհներ»: Ավելին, Ջավախքն, ըստ Սաակաշվիլու, հավատալու բա՞ն է, ուզում են դարձնել լեռնադահուկային կուրորտ:

Սաակաշվիլին երկար խոսեց ԵՊՀ-ում, ինչ ասես պատմեց իր իրեն, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյանը «նսեմացնող գործունեություն է իրականացնում Վրաստանում», մինչդեռ հայերն էլ, վրացիներն էլ շահագրգիռ չեն, որ նման բան արվի իրենց տարածքներում: Սաակաշվիլու վկայությամբ, հենց Վրաստանի ներսում կան ուժեր, որ «մոմ են վառում» նման առիթներն օգտագործելու համար, բայց ինքը՝ Վրաստանի նախագահը չի թողնում:

Մնում է խոստանալ, որ այսուհետեւ վրացական մամուլում հակահայ հրապարակումները ուղարկվեն վրաց նախագահին, թե չէ մի տեսակ անտեղյակի տպավորություն է թողնում այսօրինակ հայտարարություն անողը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# Պետական կառավարման 7 մարմիններում փաստաթղթերը միայն էլեկտրոնային են

## *Մինչեւ տարեվերջ այս համակարգին միացածները կլինեն 28-ը*

**Հայաստանի պետական կառավարման մարմիններում Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող բարեփոխումների ծրագրի որոշ արդյունքներ երեկ մի քանի լրատվամիջոցների ներկայացրեց կառավարության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սարգսյանը:**

**Ըստ կառավարության աշխատակազմի ղեկավարի, սա պետական հատվածի բարեփոխումների առաջին ծրագիրն է, որի բաղադրիչներից մեկը պետական կառավարման համակարգում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրումն է: Այս պահին 7 պետական մարմիններ ամբողջությամբ անցել են այս համակարգին: Դրանք են կառավարության աշխատակազմը, ֆինանսների, էկոնոմիկայի, տարածքային կառավարման, սփյուռքի, արտաքին գործերի նախարարությունները եւ Կոտայքի մարզպետարանը: Այսինքն, պետական կառավարման այս մարմիններում ներդրվել է համակարգչայնացած նոր համակարգ եւ բոլոր փաստաթղթերի շրջանառությունն այստեղ էլեկտրոնային տարբերակով են:**

**«Պետական համակարգ մտնող փաստաթղթերն անմիջապես սկանավորվում են եւ մուտք են արվում համապատասխան սերվերներ, իսկ փաստաթղթի բնօրինակն ուղարկվում է արխիվ: Հետագայում այս կամ նախարարությունների միջեւ ուղարկվող փաստաթղթերը շրջում են էլեկտրոնային եղանակով: Թուղթ համակարգ չի մտնում, միայն էլեկտրոնային նամակներ են: Այս համակարգի շրջանակներում ստեղծել ենք էլեկտրոնային ստորագրության հավաստագրված կենտրոն եւ կիրառվում է էլեկտրոնային ստորագրություն: Այսինքն, փաստաթուղթը իրավաբանորեն վավեր է էլեկտրոնային ստորագրությամբ: Համակարգը հնարավորություն է տալիս հետեւելու, թե ո՞ր աշխատակիցը ո՞ր փաստաթղթի վրա որքա՞ն է աշխատում: Հանձնարարականների կատարման հսկողության գործընթացը կարելի է միշտ ունենալ առանց ռեժիմով: Աշխարհի ամեն կետից, եթե ունենք ինտերնետ, մուտքագրելով համապատասխան կոդերը, կարելի է մուտք գործել այս համակարգ եւ ներկայացնել հաշվետվություններ, եզրակացություններ կամ այլ գրություններ», մանրամասնեց Դավիթ Սարգսյանը:**

**Մեր հարցին, թե մնացած պետական մարմինները ե՞րբ են ընդգրկվելու այս համակարգում, կառավարության աշխատակազմի ղեկավարը պատասխանեց, որ մինչեւ տարեվերջ նախատեսվում է 28 մարմին միացնել այս համակարգին՝ 10 մարզպետարանները, 17 նախարարություններն ու կառավարության աշխատակազմը: Այս պահին համակարգը ներդրվում է առողջապահության նախարարությունում, հաջորդը կլինեն բնապահպանության, քաղաքաշինության նախարարությունները: Մինչ տվյալ նախարարությունում համակարգի ներդրումը, 1,5 ամիս աշխատակիցները վերապատրաստվում են: Համակարգը, Դավիթ Սարգսյանի հավաստմամբ, անվտանգ է: Համակարգչից մուտք գործելիս մինչեւ սերվեր կապը կոդավորված է, որը «կոտրելու համար տեսականորեն առնվազն 7 տարի է պետք»: Մնացած պետական մարմիններն այս համակարգին նախատեսվում է միացնել եկող տարի, որի համար ՀԲ հետ առանձին վարկային ծրագիր է լինելու:**

**Դավիթ Սարգսյանը հայտնեց, որ համակարգի ծրագրավորումը պատկանում է անգլիական մի ընկերության, նման համակարգ ներդրված է նաեւ Անգլիայում եւ Ֆրանսիայի մի քանի նահանգներում: Նա հայտնեց, որ այդ համակարգը կներդրվի նաեւ պետական եկամուտների կոմիտեում, քանի որ մի քանի ամսից այստեղ գործելու է էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման համակարգը:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Մեկ միլիարդի շինարարության ծրագրերով կազատվեն ավելացված արժեքի հարկի եւ սոցիալական վճարների ներդրումից

Բյուջետային եւ ֆինանսավարկային մշտական հանձնաժողովի նախագահ **Գագիկ Մինասյանը** երեկ լրագրողների հետ հանդիպման հիմնական հատվածը տրամադրեց տնտեսական վիճակի վերլուծությանը: Տնտեսական աճի փոխարեն երկնիշ անկումը պատճառ չի կարող դառնալ, որ ԱԺ-ն պահանջի կառավարության հրաժարականը, հայտարարեց Գագիկ Մինասյանը: Ըստ թվերի՝ 2009-ի բյուջեում նախատեսված էր 9.2 տոկոսի տնտեսական աճ, փոխարենը՝ այսօր գրանցվել է 15,7 տոկոսի տնտեսական անկում: Համախառն ներքին արդյունքի բաղադրիչներից՝ միայն շինարարությունում է, որ անկումը չի դադարել եւ դեռ շարունակվում է: Ճգնաժամի պատճառով մի շարք աննախադեպ քայլերի գնացած կառավարությունը շուտով պատրաստվում է եւս մեկ աննախադեպ քայլի: Գագիկ Մինասյանն արդեն ծանոթ է ծրագրին. «Առաջիկա 3 տարիների՝ 2009-2011 թթ. համար այն բոլոր կազմակերպությունները, որոնք կպլանավորեն իրականացնել 1 միլիարդի ծախս պահանջող շինարարության ծրագրեր Հայաստանում, կազատվեն ավելացված արժեքի հարկի եւ սոցիալական ապահովության վճարների ներդրումից: Սրանք բավականին մեծ արտոնություններ են»:

Միջազգային կառույցներից ստացած վարկերի եւ ձեռնարկված քայլերի շնորհիվ Հայաստանին կհաջողվի տարին փակել 6-7 տոկոսանոց տնտեսական անկումով: Այս թիվը, ըստ Գագիկ Մինասյանի, լավն է, քանի որ նշանակում է, որ իրավիճակը կայունանալու է եւ նույնիսկ որոշակի զարգացում կգրանցվի: Պատգամավորն անհիմն համարեց լուրերը, թե պետական կառույցներում արդեն աշխատավարձի վճարման խնդիր կա, ինչը լուծվում է միջազգային կազմակերպություններից ստացված վարկերի շնորհիվ: Վարկերն ուղղվելու են միմիայն տնտեսության զարգացմանը, ասում է պատգամավորը՝ պատասխանելով նաեւ, թե արդյոք Հայաստանը ապագայում ի վիճակի կլինի՞ մարել արտաքին պարտքը: Հաշվարկների համաձայն՝ արտաքին պարտքի սպասարկման համար ապագայում Հայաստանը տարեկան պետք է հատկացնի 200 միլիոն դոլար:

«Ես կարծում եմ, որ պարտքի մի մասը մենք կմարենք ժամանակից ավելի շուտ: Հայաստանի արտաքին պարտքը 13,4 տոկոս է ՀՆԱ նկատմամբ, երբ ԱՊՀ միջինը՝ 33 տոկոս է: Եվ եթե մենք եւս 1,6 միլիարդ դոլարի վարկային միջոցներ ենք ներգրավում, ապա մեր արտաքին պարտքը չի գերազանցելու 30 տոկոսը ամեն դեպքում: Այնպես որ մեր արտաքին պարտքը լինելու է դեռ կառավարելի սահմաններում: Վերջին մի քանի տարիների ընթացքում մենք հստակ կարողացել ենք դա անել եւ առաջիկայում, կարծում եմ, դա կլինի ավելի հեշտ իրականացնելի, քան մի շարք ԱՊՀ երկրների համար»:

Ինչ վերաբերում է գնաճի տեմպերին, ապա Մինասյանը վստահեցրեց, որ մեր երկրում գնաճը համեմատաբար ցածր է, քան ԱՊՀ երկրներում:

«Եթե մենք ամսական ապահովել ենք 5, 2 տոկոս գնաճ, ապա ԱՊՀ երկրներում 10 տոկոսից ավելի է: Ես կարծում եմ, որ այս տարի եւս մեզ կհաջողվի գնաճն ապահովել բյուջեով ծրագրվածի շրջանակներում՝ մինչեւ 4, 5 տոկոս», նկատեց ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահը:

Նա նաեւ վերլուծեց, թե ստեղծված պայմաններում ինչ պետք է սպասել հայ-թուրքական սահմանը բացելուց. «Եթե ենթադրում ենք, որ թուրքական տնտեսությունն իրեն պաշտպանելու համար պետք է լրացուցիչ բարիերներ դնի մեր արտահանողների համար, ապա, կոպիտ ասած, մենք չենք էլ նայի թուրքական շուկային, կգնանք դեպի եվրոպական շուկա, եթե մենք կարող ենք այնտեղ մրցակցել: Այնպես որ ես այդտեղ խնդիր չեմ տեսնում մեր ապրանքների արտահանման համար: Ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա ես կարծում եմ, որ մեր օրենսդրության կատարելագործումը այստեղ անհրաժեշտություն է, որպեսզի ճանապարհների բացման պարագայում մենք կարողանանք օրենքով մեզ ընձեռված հնարավորություններն ավելի արդյունավետ իրականացնենք՝ պաշտպանելու մեր ներքին շուկան»:

Ըստ պատգամավորի՝ հայ-թուրքական հարաբերություններում Հայաստանն այսօր լավ դիրք ունի:

«Նրանք հայտնվել են այն կարգավիճակում, որ կամ պետք է համակերպվեն առանց նախապայմանների ճանապարհների բացմանը, կամ պետք է գնան միջազգային կարծիքին հակառակ», իր տեսակետը բացատրեց Գագիկ Մինասյանը:

Ն. Մ.

# Զարմացրել է Զ. Փոստանջյանի գործելաոճը

Ընդդիմադիր դաշտում գործող 3 հիմնական ուժից՝ ՀԱԿ-ից, Դաշնակցությունից եւ «Ժառանգությունից» որեւէ էական անակնկալ ԱԺ-ի բյուջետային եւ ֆինանսավարկային մշտական հանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասյանը չի սպասում: Որոշակիորեն անկանխատեսելի է թերեւս միայն «Ժառանգությունը», որի ներկայացուցիչ Զարուհի Փոստանջյանի գործելաոճը Ստրասբուրգում զարմացրել է գործընկերոջը:

«Ինքս անակնկալի եմ եկել երեկ տիկին Փոստանջյանի պահվածքից: Ադրբեջանական մի կայքից մեջբերում անեմ: Հոդվածը վերնագրված էր այսպես. Հայաստանի պատվիրակը Հայաստանի վրա ճնշում գործադրելու նպատակով ստորագրություններ է հավաքում թուրքական եւ ադրբեջանական պատգամավորների շրջանակում: Սա, կարծում եմ, աննախադեպ մի պահվածք է, ես կարծում եմ, որ այս պահվածքի դրսեւորումը եթե նրանք իսկապես իրականացնեն ներքաղաքական զարգացումների բնագավառում, կարող են իսկապես խնդիրներ առաջացնել», նկատում է ԱԺ պատգամավորը:

Ն. Մ.

ԱԶԳ

## Իրավիճակ

# Քաղաքական նոր մարտահրավեր հայերի համար

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Քաղաքական ռեալիզմը ուսուցանում է, որ մենք չպետք է արագ եւ հեշտ լուծում ակնկալենք ցեղասպանության ճանաչման հարցում: Այդուհանդերձ մենք շատ ցնցվեցինք, երբ մեր ակնկալիքները պատնեշի հանդիպեցին: Նախագահ Օբաման խուսափեց օգտագործել «Ց» (ցեղասպանություն) բառը նահատակների օրվա իր առաջին հրապարակային ելույթի ժամանակ, չնայած նա դրան շատ մոտեցավ Անկարայում կատարած իր մյուս հայտարարություններով: Սա նշանակում է, որ մենք շարունակելու ենք մեր ջանքերը գործադրել եւ պահանջել նախագահից, որ խոստումը տեր կանգնի: Եթե կարողանանք արդյունավետ պայքար ծավալել, մեզ կհաջողվի գուցե կատարել տալ իր խոստումը նախքան պաշտոնավարության ավարտը եւ նախքան ամերիկահայերի քվեների կարիքն զգալը՝ նախագահության երկրորդ ժամկետի համար: Առիթը չպետք է բաց թողնենք պահանջելու նրանից, որ օգտագործի «Ց» (ցեղասպանություն) բառը, քանի դեռ ձվաձեւ կրճատել է իր ծրագրերը Հայաստանում: Որոշումը ընդունվել է հունիսի 10-ին՝ Հիլարի Քլինթոնի նախագահությամբ անցկացված ՀՄԿ-ի տնօրենների խորհրդի ժողովի ընթացքում:

ՀՄԿ-ի ծրագիրը Հայաստանում մեկնարկեց 2006-ի սեպտեմբերին: 235 միլիոն դոլար էր հատկացված Հայաստանում այդ ծրագրի իրականացման համար: Գումարը տրամադրվում էր եռամսյակը մեկ՝ ժողովրդավարական չափանիշների իրականացման հիման վրա: Ծրագրված էր ընդգրկել 750 հազար հողագործների կամ հանրապետության գյուղական բնակչության 75 տոկոսին: Ծրագրի գլխավոր բաղկացուցիչ մասերն էին ճանապարհների շինարարությունն ու ոռոգման համակարգերի վերանորոգումները:

Ըստ Համաշխարհային շուկաների ուսումնասիրման կենտրոնից (ՀՇՈւԿ) Նատալյա Լեշչենկոյի՝ «Հայաստանի կառավարությունը չի տեսնելու 2006-ի պայմանագրով նախատեսված 67 միլիոն դոլարը, զապես դարձել է Կովկասում գերհզոր պետությունների մրցակցության զոհը: Ռուսաստանը սեղմում է օղակը Վաշինգտոնի կողմից պաշտպանյալ պետության՝ Վրաստանի շուրջը, Մ. Նահանգներն էլ իր հերթին փոխադարձաբար պատժում է Ռուսաստանի կողմից պաշտպանյալ պետությանը՝ Հայաստանին: Մի քանի օր առաջ Անվտանգության խորհրդում իր վետոյի իրավունքից օգտվելով՝ Ռուսաստանը վերջ տվեց ՄԱԿ-ի դիտորդական առաքելության մանդատին՝ Վրաստան-Աբխազիա սահմանագծում, հայտարարելով, որ Աբխազիան այժմ արդեն ինքնուրույն պետություն է: Բացի այդ, մայիսի 31-ի երեւանյան քաղաքապետի ընտրությունների արդյունքները վիճարկեց միայն ընդդիմությունը, որն ակնկալելի է որեւէ երկրում, բայց Եվրոմիության դիտորդների հավանությանն արժանացան:

Դժբախտաբար, Բուշի վարչակազմը անընդհատ փորձեց ապակայունացնել Հայաստանը: Դրանում համոզվելու համար գրասենյակն է զբաղեցնում: Այդ ժամանակ տարբերություն չի լինելու նախագահության թեկնածու Օբամայի եւ նախագահ Օբամայի միջեւ:

Եթե 94 տարիները չեն սպառել մեր վճռականությունը, մենք կարող ենք դեռ առաջ գնալ եւ պահանջել, որ Մ. Նահանգների կառավարությունը եւ աշխարհի մյուս կառավարությունները ճանաչեն մեր ժողովրդի հանդեպ գործադրված ցեղասպանությունը:

Մինչ դա կմնա մեր երկարաժամկետ նպատակը, մենք պատրաստ ենք դիմագրավել անմիջական քաղաքական մարտահրավերներին, որոնք հառնում են մեր առաջ: Պետքարտուղարությունը նախորդ վարչակազմի օրոք տվել էր իր գնահատականը կովկասյան տարածաշրջանի վերաբերյալ եւ այս գնահատականը կարծես անփոփոխ փոխանցվել է Օբամայի վարչակազմին: Անշուշտ արտաքին քաղաքականության բազմաթիվ այլ խնդիրներ եւս չեն վերանայվել եւ չեն վերանայվելու: Թեպետ նախագահ Օբաման փոխել է Մ. Նահանգների քաղաքականությունը Մերձավոր Արեւելքի նկատմամբ եւ հաշտեցման եզրեր է փնտրում զայրացած մահմեդական աշխարհի հետ, որին նախորդ վարչակազմը աներջահայաց կերպով ռմբակոծեց եւ ահաբեկեց, փոփոխությունը չի տարածվում արտաքին քաղաքականության մյուս հարցերի վրա:

Բուշի վարչակազմի նոր պահպանողականները մեկ ասույթ էին սովորել իրենց ուսուցիչ Բեռնար Լուիսից, այն է, որ մահմեդականները սրով ու թրով էին նվաճել աշխարհը, ուրեմն նրանք հարգում էին միայն ուժը եւ իշխանությունը: Այդ ասույթը գուցե ճշմարիտ հնչեր այն ժամանակ, միջին դարերում, բայց մեր օրերում, ներկա դարաշրջանում դա հարված հասցրեց վարչակազմի երեսին, եւ այդ պատճառով էլ Մ. Նահանգները գտնվում են այս վիճակում: Նախագահ Օբաման որոշակիորեն շրջվեց այդ ցինիկ փիլիսոփայությունից եւ, հուսով ենք, քաղաքականության այդ փոփոխությունը մեզ խաղաղություն է պարգեւելու:

Թվում է, թե պետքարտուղարությունը շարունակելու է իր նախորդների քաղաքականությունը, որը ձեռնտու է պետքարտուղար Հիլարի Քլինթոնի համար, որպեսզի կարողանա փոխհատուցել իր քարոզարշավի թուրք հովանավորներին:

Մինչ ցեղասպանության հարցի ամբողջ ծանրաբեռնվածությունը նախագահի ուսերի վրա է, Հայաստանին ուղղված ներկա պատժամիջոցներն ավելի խոր արմատներ ունեն:

Կարծես բավական չէր, որ վարչակազմը զգալիորեն նվազեցրել էր Հայաստանին տրված տարեկան օժանդակության չափը, ավելացնելով Ադրբեջանին հատկացված չափաբաժինը, հիմա էլ մեկ ուրիշ ապտակ է հասցնում մեր երեսին, որի անմիջական ազդեցությունը զգալու է մեր ժողովուրդը: «Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան» (ՀՄԿ) 67 միլիոն դոլարով որը մինչեւ 2011 թվականը հատկացվելիք 235,5 միլիոն դոլարի օժանդակության մաս էր կազմում: Դրանից 160 միլիոն դոլարը պետք է ուղղորդվեր ճանապարհների շինարարությանն ու վերակառուցմանը: Այժմ սկսված ծրագրերը պետք է կանգ առնեն»:

Այս որոշումը կարծես վերանայման ենթակա չէ: Նույն աղբյուրը որպես պատճառ նման կոշտ մոտեցման նշում է. «Մ. Նահանգների պետքարտուղարությունը, որը ՀՄԿ-ն ղեկավարում է ժողովրդավարական չափանիշներով, անհանգստացած է Հայաստանում ժողովրդավարության վիճակով՝ 2008-ի փետրվարին կայացած նախագահական վիճելի ընտրություններից ի վեր, եւ նախազգուշացրել է կառավարությանը հատկացումների հնարավոր նվազեցման մասին, եթե բարեփոխումներ չկատարվեն: Մայիսի 31-ի քաղաքապետի ընտրությունը մայրաքաղաք Երեւանում, որն, ըստ ընդդիմության, խարդախված էր, «վերջին կաթիլն էր»: ՀՄԿ-ն դադարեցրեց ենթակառուցվածքների վերանորոգմանը հատկացվելիք օժանդակությունը, շեշտելով, որ որոշումն անփոփոխ է եւ պատասխանատվության ամբողջ ծանրությունը ընկնում է հայկական իշխանությունների վրա»:

Նրանք, ովքեր ծանոթ են Հայաստանի գյուղական վայրերի ճանապարհների ողորմելի վիճակին, շատ լավ են հասկանալու այս պատժամիջոցի ամբողջական ազդեցությունը, որն ուղղված է առավելապես ժողովրդին եւ ոչ թե կառավարությանը, որին մեղադրում են ժողովրդավարական նորմերը չպահպանելու համար:

Պատժական այս գործողությունն ամբողջովին քաղաքական ենթատեքստ ունի: Դա ժողովրդավարական չափանիշների կիրառման երկակի բնույթի հետեւանք է: Հարեւան Ադրբեջանը վերջերս հանրաքվեով փոփոխություն մտցրեց սահմանադրության մեջ՝ թույլատրելով Իլհամ Ալիեւին նախագահել մինչեւ կյանքի վերջը, որը նշանակում է վերադարձ դեպի միջնադարյան խանական համակարգին: Դրան հասնելու համար Ալիեւը բանտարկեց լրագրողների եւ սպանել տվեց ընդդիմադիր առաջնորդների: Եվ այս բոլոր «ժողովրդավարական» գործողությունների համար Ադրբեջանը վարձատրվեց՝ հավելյալ օժանդակություն ստանալով Մ. Նահանգներից: Ավելին, Օբաման շարունակում է Ազատության աջակցության օրենքի 901 հոդվածի վերաբերյալ Բուշի որդեգրած քաղաքականությունը: Բուշը Կոնգրեսի կամքին հակառակ գնալով, զենքի վաճառքը Ադրբեջանին դարձրել էր կիրառելի արտոնություն:

Պետքարտուղարության գործողությունը քաղաքական շատ ավելի խոր ենթատեքստ ունի, քան սոսկ ժողովրդավարական չափանիշների կիրառումը Հայաստանում թե Ադրբեջանում: Իր լկտի գործողություններով Բաքվի կառավարությունը արդեն իսկ ժողովրդավարական նորմերը ծիծաղի առարկա է դարձել: Իսկ Հայաստանը պար- բավական է միայն լսել Մ. Նահանգների ֆինանսավորմամբ գործող «Ազատ Եվրոպա»-«Ազատություն» ռադիոկայանի հաղորդումները: Թվում է, թե Օբամայի վարչակազմն էլ է որդեգրել այդ քաղաքականությունը, եւ հիմա ՀՄԿ-ի նոր պատժամիջոցով մի նոր հարված է հասցնում անօգնական մի ժողովրդի: Մի՞թե սա չի հակասում Օբամայի դավանած բարձրարժեք բարոյական սկզբունքներին:

USAID-ին սկզբունքորեն որեւէ այլ բանի հետ առնչություն չպետք է ունենա, մասնավորապես չպետք է օգտագործվի որպես քաղաքական գործիք՝ քայքայելու վարկ ստացող երկրի ներքին քաղաքականությունը: Վերջերս Բոլիվիայի կառավարությունը խստորեն բողոքել էր, որ USAID-ին պաշտպանում է երկրի ընդդիմադիր խմբավորումներին: Ծիծաղելի է, որ այդ ընդդիմադիր կուսակցությունների կազմում հարուստ հողատերերն են, որոնք ցանկանում են անջատվել այդ աղքատ երկրի մնացյալ մասից:

Պատահականություն չէ, որ Հայաստանում Մ. Նահանգների դեսպան Մարի Յովանովիչը Ամերիկա է ուղեւորվում այս օրերին բացատրական որոշ աշխատանքներ կատարելու տեղի հայկական համայնքներում: Իր նախորդների նման տիկին Յովանովիչն էլ կարողացել է կարճ ժամանակում շահել Հայաստանի բարեհաճությունը, սակայն նա հիմա ստիպված է իր վերադասների սարսափելի գործողություններին ըմբռնումով մոտենալ եւ փորձել մեղմել մեր ընդվզումը:

Մեր պարտականությունն է պաշտպանել հարգանքի պայմաններում տալ նրան ամենանախընթաց հարցերը: Իր շրջագայության ավարտին կասկած չպետք է ունենանք, որ նա պետքարտուղարությանը ներկայացրած հաշվետվության մեջ նշի, որ հայկական համայնքը զայրացած է այս անտեղի եւ չհիմնավորված գործողությամբ եւ որ ամեն ինչ անելու է համապատասխան վերաբերմունք ցուցաբերելու որեւէ ժամանակ եւ որեւէ ձեւով:

Մեր մյուս գործողությունը օրենսդիր մարմինների հետ է: Մեր քարոզչական խմբավորումներին զուգահեռ, ամեն մի հայ պարտավոր է այնքան ձանձրացնել կոնգրեսականներին եւ սենատորներին, մինչեւ մեր ընդհանուր ձայնը լսելի դառնա:

Մ. Նահանգները որոշիչ դերակատարություն ունի շատ երկրների, այդ թվում, իհարկե, նաեւ Հայաստանի ճակատագրում: Հայաստանը չի կարող նավթ կամ որեւէ այլ ռեսուրս հայտնաբերել ինքն իրեն անփոխարինելի դարձնելու համար: Ոչ էլ կարող է փոխել դաշնակցային կապերը, քանի դեռ Թուրքիան աչալրջորեն հսկում է սահմանում: Այնպես որ Հայաստանի պաշտպանական գիծն այստեղ է, այս երկրում՝ Մ. Նահանգներում: Մենք պետք է մարտահրավերն ընդունենք, քաղաքականապես գրագետ դարձնենք մեր համայնքը եւ մեր ձայնը բարձրացնենք ի պաշտպանություն Հայաստանի:

Թարգմ. Հ. ԾՈՒԽԿՅԱՆԸ

ԸՆԴԴԵՄ ՈՒՐԱՑՄԱՆ

# «Կապույտ գրքի» շնորհանդեսներ Լոնդոնում եւ Անկարայում

Ի լրացումն **«Ազգի»** հունիսի 19-ի հաղորդագրության, որտեղ տեղեկացրել էինք ընթերցողներին, որ Լոնդոնում տեղակայված «Կոմիտաս» ինստիտուտը հաջորդ շաբաթվա ընթացքում Լոնդոնում եւ Անկարայում միաժամանակ լույս է ընծայելու Ջեյմս Բրայսի եւ Առնոլդ Թոյնբիի համահեղինակած «Հայերի հանդեպ վերաբերմունքը Օսմանյան կայսրությունում. 1915-1916 թթ.» չգրաքննված հատորի անգլերեն եւ թուրքերեն տարբերակները (վերամշակված Արա Սարաֆյանի կողմից), Բրիտանա-հայկական խորհրդարանական համակուսակցային խմբակցության (ԲՀԽՀԽ) հիմնադիրներից խմբակցության գործադիր քարտուղարուհի Օդեթ Բազիլը հունիսի 24-ի իր հաղորդագրությամբ իրազեկում է, որ երկուշաբթի օրը՝ հունիսի 22-ին այդ գրքի (որը նաեւ հայտնի է «Կապույտ գիրք» անվանումով) թուրքերեն տարբերակի շնորհանդեսն իրոք տեղի է ունեցել բրիտանական խորհրդարանի Լորդերի պալատում գրքի հովանավոր՝ լորդ Էյվբերիի եւ վերամշակման հեղինակ՝ Արա Սարաֆյանի ներկայությամբ: Կայացել է նաեւ մամլո ասուլիս թուրք լրատվամիջոցների համար: Իրադարձությունը լայնորեն լուսաբանվել է «Հյուրիեթ» թուրքական թերթում:

Այսօր՝ հունիսի 26-ին լորդ Էյվբերին (որը ԲՀԽՀԽ-ի փոխնախագահն է) եւ Արա Սարաֆյանը (ԲՀԽՀԽ-ի խորհրդատու վարչության անդամ) մեկնելու են Անկարա՝ մասնակցելու նույն գրքի շնորհանդեսին թուրքական խորհրդարանում:

Հիշեցնենք, որ թուրք խորհրդարանականները 2005-ին գիրքը «Քարոզչական հրատարակություն» որակելով, խնդրագիր էին ներկայացրել բրիտանացի խորհրդարանականներին՝ պահանջելով չտպագրել գրքի ամբողջական վերամշակված տարբերակը եւ նրա թուրքերեն թարգմանությունը, բայց լուրջ քննարկումներից հետո բրիտանացիները 2006-ին մերժել էին խնդրագիրը եւ հրավիրել իրենց թուրք գործընկերներին միասին խորհրդածելու: Թուրքերը չէին ներկայացել հանդիպմանը:

Այժմ գրքերի շնորհանդեսի առթիվ ԲՀԽՀԽ-ն նամակ-հաղորդագրությամբ դիմել է Մեծ Բրիտանիայի վարչապետ Գորդոն Բրաունին, արտգործնախարար Դեյվիդ Միլիբենդին եւ խորհրդարանի Համայնքների պալատի նորանշանակ նախագահ Ջոն Բերկոուին՝ պահանջելով վերանայել Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը, հաշվի առնելով անհերքելի փաստերն ու հեղինակավոր ակադեմիկոսների եւ մարդու իրավունքների պաշտպանների կոչերը՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Ավելացնենք, որ մայիսի 7-ին բրիտանական խորհրդարանի Համայնքների պալատում գիտաժողով էր տեղի ունեցել, որի ընթացքում ելույթներով հանդես էին եկել պրոֆ. Իսրայել Չառնին ու «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանը: Վերջինիս ելույթի մասին տես **«Ազգի»** մայիսի 14-ի համարը:

Հ. Ծ.

# Հայ բժիշկների համաշխարհային կոնգրեսը՝ հուլիսի 1-4-ը

«Առողջապահության բնագավառի ամերիկահայ մասնագետների կազմակերպության» (ԱԱՄԿ) նախաձեռնությամբ Նյու Յորքի շքեղագույն «Հիլթոն» հյուրանոցում հուլիսի 1-4-ը տեղի է ունենալու Հայ բժիշկների համաշխարհային կոնգրեսը, տեղեկացնում է «Արմինյըն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հունիսի 13-ի համարում անվանի լրագրող Ֆլորենս Ավագյանը:

Մեծ թվով ականավոր հայ բժիշկներ ներկա են գտնվելու եւ մասնակցելու են կոնգրեսի աշխատանքներին: Նրանց թվում են MRI-ի գյուտարար, համաշխարհային համբավի արժանացած դոկտ. Ռայմոնդ Տամատյանը՝ Մեծ Բրիտանիայի առողջապահության նախարար լորդ Արա Դարզին, Սան Դիեգոյի Կալիֆոռնիա համալսարանի հոգեբուժության ամբիոնի պրոֆեսոր դոկտ. Հակոբ Ակիսկալը, Նյու Յորքի «Լենոքս Հիլ» հիվանդանոցի առաջավոր վիրաբույժ դոկտ. Վիգեն Փամուքյանը, Հայաստանի եւ Ղարաբաղի առողջապահության նախարարները, սփյուռքի նախարարը, Երեւանի պետական բժշկական համալսարանի ռեկտորը, բժշկագիտական գրադարանի տնօրենը եւ այլք:

Նախատեսված են պլենար նիստեր նվիրված համեմատական բուժհամակարգերին, դեղագործական նորություններին, հեռաբժշկությանը եւ ենթամասնագիտական թեմաներից՝ ատամնաբուժությանը, անզգայացմանը, մանկաբուժությանը եւ այլն:

Կոնֆերանսի վերջին օրը «Հիլթոն» հյուրանոցում կազմակերպված գալա-խնջույքի ժամանակ ներկաները պատվելու են լորդ Արա Դարզիին եւ հայր ու որդի Նազար եւ Լեւոն Նազարյաններին:

Հ. Ծ.

AZG NEW 5.QXD 6/25/2009 9:39 PM Page 1



# Հայ միգրանտները չեն ցանկանում լքել Ռուսաստանը

«Ռուսաստանից Հայաստան վերադարձող միգրանտների զանգվածային հոսք դեռ չի գրանցվել, ինչպես նախորդ տարիներին, կան առանձին դեպքեր, որոնք էական բնույթ չեն կրում», ասում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետ **Գագիկ Եգանյանը**:

Միգրացիայի գործակալությունը Ռուսաստանի վրա համաշխարհային ճգնաժամի ազդեցության պատճառով ավելի շատ միգրանտների վերադարձ էր ենթադրում: Հիմնականում այն մարդիկ, ովքեր արդեն երկար տարիներ ապրում եւ աշխատում են ՌԴ տարածքում, սակայն չունեն սեփական բնակարան: Անգամ Ռուսաստանի համապատասխան միգրացիոն ծառայությունների հետ պայմանագիր էին կնքել նրանց վերադարձը հեշտացնելու համար, սակայն վերադարձողների թիվը մեծ չէ:

«Հայ միգրանտներից շատերը ճգնաժամի պատճառով Ռուսաստանում կորցրել են աշխատանքը, սակայն չեն ցանկանում հայրենիք վերադառնալ եւ փող վաստակելու նոր ուղիներ են փնտրում», ասում է Եգանյանը:

Համաձայն անկախ փորձագետների ներկայացրած գնահատականի, Ռուսաստանում միայն Հայաստանից եկած աշխատանքային միգրանտների թիվն ավելի քան 1 մլն աշխատանքային տեղ է կազմում:

Միգրացիան Հայաստանում սկսվել է 1992-ից, սակայն 2003-ից հետո միգրացիոն հոսքերի ծավալները զգալիորեն նվազել են:

Տարբեր գնահատականներով վերջին 15 տարվա ընթացքում Հայաստանից հեռացել է 800 հազարից 1.5 մլն մարդ:

### Հայաստանում ապաստան գտնելու խնդրանքով դիմել են 70 հոգի

Տարեսկզբից ավելի քան 70 մարդ դիմել են Հայաստանում ապաստան գտնելու խնդրանքով: Հիմնականում դիմել են Իրաքի, Թուրքիայի, Աֆղանստանի քաղաքացիները: Գագիկ Եգանյանի խոսքերով, դիմում են այն քաղաքացիները, ովքեր իրենց երկրներում հետապնդվում են քաղաքական, կրոնական եւ էթնիկ պատճառներով:

Մինչ ռազմական գործողությունների մեկնարկը Իրաքում հայկական համայնքն ընդգրկում էր 20.000 մարդ, սակայն վերջին 4-5 տարվա ընթացքում նրանց գրեթե կեսը լքել է երկիրը: Եգանյանը նկատում է, որ Հայաստանում ապաստան փնտրող Իրաքի քաղաքացիների թիվը աստիճանաբար նվազում է՝ պայմանավորված երկրում տիրող հարաբերական հանդարտությամբ:

«Սակայն հաշվի առնելով Իրաքում ազգությամբ հայ մնացած քաղաքացիներին, այդ երկրից ապաստան փնտրողների հոսքի աճի հնարավորությունը դեռ պահպանվում է», ասաց Եգանյանը:

Նա հիշեցրեց, որ ապաստան տրամադրելու դիմումները քննվում են երեք ամսվա ընթացքում, ընդ որում Հայաստանում ապաստան ստանալուց հետո նրանց տրամադրվում է բնակության իրավունք, նաեւ երաշխիք, որ նրանց չեն վերադարձնի նախկին բնակության երկիր:

2008-ի վերջին մոտավորապես 1200 օտարերկրյա քաղաքացի է Հայաստանում ապաստան ստանալու խնդրանքով դիմել: Իրաքում ռազմական գործողությունների մեկնարկից հետո Հայաստան է եկել ազգությամբ հայ 943 իրաքցի: Նրանց տրամադրվել է ժամանակավորապես պաշտպանված անձանց կարգավիճակ:

2000-2007 թթ. 1380 մարդ է դիմել ՀՀ իշխանություններին՝ ապաստան ստանալու խնդրանքով, որոնցից 300-ը միայն 2007-ին:

Նրանցից 1200-ին տրվել է ժամանակավորապես պաշտպանված կարգավիճակ, մասնավորապես՝ 800-ը Իրաքի քաղաքացիներ են, 40-ը՝ Իսրայելի եւ Լիբանանի:

Հայաստանում ապաստան հայցողների համար գոյություն ունի երկու կարգավիճակ՝ փախստականի եւ ժամանակավոր ապաստանի: Փախստականի ժամկետը տրվում է անժամկետ, իսկ ժամանակավոր ապաստանինը՝ մեկ տարի ժամկետով կարգավիճակը երկարացնելու հնարավորությամբ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Միգուցե հայ համա՞յնքն է մեղավոր հայապահպանության հարցում

*Հայ երեխաները հայերեն խոսել չգիտեն*

Հյուսիսային Կովկասի հայության հիմնախնդիրներից ելնելով, երեկ «Փաստարկ» ակումբում լրագրողներին հանդիպեց Կրասնոդարի «Երկրամաս» թերթի խմբագիր Տիգրան Թավադյանը: Թեման հիմնականում ծավալվեց այն հարցի շուրջը, որ հայ համայնքներում հայապահպանությանը լուրջ վտանգ է սպառնում: Կրասնոդարի երկրամասում հայերը մեծ թիվ են կազմում: 2005 թվականին պաշտոնական տվյալներով գրանցվել է 275.000 հայ, սակայն ոչ պաշտոնապես՝ այնտեղ ապրում են 400 հազարից ավելի: Կազմակերպվում են մշակութային միջոցառումներ, սակայն Հայաստանից այնտեղ այցելում են հայկական մշակույթի հետ կապ չունեցող երգիչներ ու երաժիշտներ: Երիտասարդները լսելով այդպիսի կատարողների, կարծում են՝ դա է հայ մշակույթը: Հայրենասիրական համերգներ կազմակերպվել են, բայց երիտասարդները հայերեն գրեթե չեն հասկանում: Այդ պատճառով համայնքը գտնվում է անկազմակերպ վիճակում: Թավադյանը չժխտեց այդ փաստը, սակայն նշեց, որ չունեն համապատասխան մասնագետներ եւ ֆինանսավորում: Կա դասագրքերի խնդիր:

Մի քանի մեծահարուստներ ստեղծել են «Խաչքար» կազմակերպությունը Կրասնոդարում, որտեղ կան պարի խմբակ, կիրակնօրյա դպրոց եւ ամսագիր: Եթե ստեղծվել է դպրոց, պետք է քայլեր ձեռնարկել լեզվի պահպանման համար, սակայն շատերը չեն մասնակցում համայնքային կյանքին: Փաստորեն բարբառախոսությունն ու ռուսախոսությունը միասին լուրջ վտանգ են: Բարբառով խոսում են նաեւ համշենահայերի երեխաները, որոնք իրենց կիսով չափ են միայն հայ համարում: «Մենք ավելի շատ սպասելիքներ ունենք ՀՀ սփյուռքի նախարարությունից, մեզ մոտ անվստահություն կա, հայերի մեծ մասը դժգոհ է տնտեսական վիճակից», նշում է Տիգրան Թավադյանը:

ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# Չինաստանում մշակում են «երկկենցաղ» աերոբուս



Չինաստանում սկսվել է «երկկենցաղ» օդանավի մշակումը, որը չափերով կարող է դառնալ աշխարհում խոշորագույնը: Նախագծվող օդանավը մեծությամբ համադրելի է A 320 աերոբուսի հետ: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը, վկայակոչելով չինական Սինհուա գործակալության հրապարակմանը:

Նոր «երկկենցաղ» օդանավը ստացել է «Վիշապ-600» անվանումը: Սպասվում է, որ դրա ստեղծումը եւ փորձարկումները կավարտվեն մինչեւ 2013 թվականը: Չինացիները հույս ունեն իրենց աերոբուսի սերիական արտադրությունը սկսել 2014-ին:

Չինաստանը մտադիր է նոր օդանավն օգտագործել ծովում փրկարարական գործողությունների իրականացման եւ երկրի ծովային սահմանների պարեկության նպատակներով: «Վիշապ-600»-ը կարող է օգտագործվել նաեւ արտակարգ իրավիճակներում, օրինակ՝ անտառային հրդեհները մարելու նպատակով:

2009-ի մայիսին «Ժենմին Ժիբաո» թերթում հաղորդում էր հրապարակվել, որ Ներքին Մոնղոլիայի ինքնավար շրջանի Բաոտոու քաղաքում սկսվել է «երկկենցաղ» օդանավերի արտադրության կենտրոնի շինարարությունը: Առայժմ պաշտոնապես հայտնի չէ, թե արդյոք հենց այդ կենտրոնո՞ւմ է հավաքվել «Վիշապ-600»-ը:



# Չավեսը Իրանի դեպքերի համար մեղադրեց ԿՀՎ-ին

**Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսը հայտարարել է, որ Իրանում անկարգությունների եւ բողոքի ելույթների կազմակերպիչը եղել է ամերիկյան ԿՀՎ-ն:**

**«Մարդիկ դուրս են գալիս փողոցներ, ոմանք սպանվում են. դիպուկահարներ կան: Այս ամենի հետեւում կանգնած են ԿՀՎ-ն, եվրոպացի եւ ամերիկացի իմպերիալիստները», ասել է Չավեսը, որի խոսքերը մեջբերում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Իրանի կառավարական լրատվամիջոցների տվյալներով, ոստիկանության եւ ցուցարարների բախումների ժամանակ սպանվել է 17 մարդ: Ընդդիմությունը խոսում է 15 զոհերի մասին:**

**Հունիսի 12-ի նախագահական ընտրությունների պաշտոնական արդյունքների համաձայն, վերընտրվել է գործող նախագահ Մահմուդ Ահմադինեժադը (63 տոկոս): Սակայն ընդդիմությունը բողոքի զանգվածային ելույթներով օրեր շարունակ պահանջում էր վերահաշվարկել քվեները: Իրանի իշխանությունները անկարգությունների հրահրման մեջ մեղադրում են Արեւմուտքի հատուկ ծառայություններին: Ուգո Չավեսը առաջիններից էր, որ շնորհավորեց Ահմադինեժադի հաղթանակը:**

**Հետընտրական օրերին Իրանում ձերբակալվել են մի քանի լրագրող, երկրից արտաքսվել է բրիտանացի երկու դիվանագետ:**

**Հունիսի 24-ին Սպիտակ տան ներկայացուցիչները հայտարարեցին, որ բանակցություններ են վարվում ԱՄՆ-Վենեսուելա դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու նպատակով: Ինչ վերաբերում է Իրանին, այդ երկրում ծայր առած բողոքի ձեռնարկումների պատճառով ԱՄՆ-ը չեղյալ է հայտարարել իր անկախության օրվա՝ հուլիսի 4-ի առթիվ իրանցի դիվանագետներին ավելի վաղ հղած հրավերները:**

# Մեդվեդեւ. «Մտադիր ենք միլիարդներ ներդնել Նիգերիայում»



**Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը ուղեւորություն է սկսել Աֆրիկայի մի շարք երկրներում, որոնցից առաջինը Նիգերիան է: Իր պաշտոնական այցելության ժամանակ Մեդվեդեւը հայտարարել է, որ Ռուսաստանը «մտադիր է բազմամիլիոնանոց ներդրումներ անել Նիգերիայի տնտեսության մեջ»:**

**«Խոսքը խողովակաշարային համակարգերի, վերամշակման նոր կարողությունների ստեղծման մասին է: Եվ մենք պատրաստ ենք աջակցել մեր նիգերիացի գործընկերներին», ասել է ՌԴ նախագահը Նիգերիայի նախագահ Ումար Յար' Ադուայի հետ բանակցությունների ավարտից հետո կազմակերպված մամլո ասուլիսում: Մեդվեդեւի խոսքերով, նման համագործակցությունն ունի «շատ լավ հեռանկարներ»:**

**ՌԻԱ գործակալության տվյալներով, խոսքը «շատ խոշոր նախագծերի» մասին է, որոնք միլիարդավոր դոլարներ են պահանջում:**

**Մասնավորապես հայտնի է դարձել, որ ռուսական «Գազպրոմը» եւ Նիգերիայի պետական նավթային կորպորացիան հուշագիր են ստորագրել հավասար հիմունքներով համատեղ ձեռնարկություն հիմնելու վերաբերյալ: Ձեռնարկության կանոնադրական կապիտալը կազմում է 7,5 մլն դոլար: Ակնկալվում է, որ արդեն 2010-ին համատեղ ուժերով աշխատանք կծավալի Նիգերիայում գազամուղի 360 կիլոմետրանոց հատվածի կառուցման նպատակով:**

**Ավելի վաղ՝ հունիսի 23-ին Մեդվեդեւը այցելել էր Եգիպտոս, որտեղ մի շարք համաձայնագրեր էր կնքել ռազմավարական գործընկերության եւ որոշ նախարարությունների ու պետական ձեռնարկությունների մակարդակով միջազգային համագործակցության վերաբերյալ: Խոսվել էր նաեւ Մերձավորարեւելյան խնդրի կարգավորման մասին. այստեղ Ռուսաստանն ու Եգիպտոսը ունեն գրեթե համանման տեսակետներ:**

**Մեդվեդեւի աֆրիկյան ուղեւորության մեջ հաջորդ երկրներն են Անգոլան եւ Նամիբիան, որտեղ, ինչպես Նիգերիայում, կքննարկվեն մասնավորապես հումքի մշակման եւ օգտագործման հարցեր:**

# Օբաման երկարաձգեց հակակորեական պատժամիջոցները

**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման երկարաձգել է ԿԺԴՀ-ի դեմ ուղղված առեւտրական որոշ պատժամիջոցների գործողության ժամկետները, օգտվելով պետության ղեկավարի արտակարգ լիազորություններից: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Խոսքը վերաբերում է մասնավորապես գույքի հետ կապված գործարքների սահմանափակումներին: Այդ պատժամիջոցների գործողության ժամկետը լրանալու էր հունիսի 26-ին: Օբամայի որոշման համաձայն, պատժամիջոցները ԿԺԴՀ-ի նկատմամբ կգործեն եւս մեկ տարի:**

**Ինչպես նշվում է ԱՄՆ նախագահի հայտարարության մեջ, պատժամիջոցները երկարաձգելու որոշումը կապված է Հյուսիսային Կորեայում միջուկային նյութերի կուտակման հետ, ինչը «սպառնում է Միացյալ Նահանգների պետական անվտանգությանը եւ հակասում ԱՄՆ արտաքին քաղաքականության նպատակներին ու շահերին»:**

**Ֆրանսպրեսը հիշեցնում է, որ 2008 թվականին ԱՄՆ նախկին նախագահ Ջորջ Բուշը ԿԺԴՀ-ի անունը հանել էր ահաբեկչությանն օժանդակող երկրների ցանկից եւ վերացրել տնտեսական պատժամիջոցները, բացառությամբ գույքի հետ կապված սահմանափակումների: Երեկ հենց այդ պատժամիջոցների գործողության ժամկետն է երկարաձգել Բարաք Օբաման:**

**Արեւմուտքի երկրների եւ Ճապոնիայի հետ ԿԺԴՀ-ի հակամարտությունը խորացավ 2009-ի մայիսի 25-ին, երբ կորեացիները իրականացրին իրենց երկրորդ միջուկային փորձարկումը, ինչպես նաեւ արձակեցին փոքր եւ միջին հեռահարության հրթիռներ:**

**ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հունիսի 12-ին ԿԺԴՀ-ի դեմ ձեռնարկեց նոր պատժամիջոցներ, որոնցով մասնավորապես արգելվում է հյուսիսկորեական զենքի արտահանությունը: Արեւմուտքը Փենյանին հորդորում է հրաժարվել սեփական միջուկային ծրագրից, բայց ԿԺԴՀ-ն շարունակում է միջուկային մշակումները:**

**Հունիսի 24-ին ԿԺԴՀ պետական լրատվական գործակալությունը տարածեց հայտարարություն, որով Փենյանը սպառնում է ոչնչացնել ԱՄՆ-ը, եթե ամերիկացի իմպերիալիստները նոր պատերազմ սանձազերծեն: Ավելի վաղ Ճապոնիայի հետախուզությունը ամերիկացիներին նախազգուշացրել էր, որ ԿԺԴՀ-ում մշակվում են նոր հրթիռներ, որոնցից մեկը կարող է ուղղվել ամերիկյան նահանգ Հավայան կղզիների կողմը:**

AZG NEW 6.QXD 6/25/2009 9:40 PM Page 1



# Սիփան Շիրազ. «Ուզում եմ, որ ինձ հիշեն իմ ստեղծագործություններով»

«Քանդակագործ, նկարիչ, բանաստեղծ, սակայն առաջին հերթին հրաշալի անձնավորություն, լավ ընկեր ու հայրենասեր մարդ: Մարդ մեծատառով», բանաստեղծ Սիփան Շիրազին այսպես է ներկայացնում եղբայրը՝ նշանավոր քանդակագործ Արա Շիրազը:

Սիփան Շիրազի 30-ամյակը չէր բոլորել, երբ նրա կյանքի թելը կտրվեց (1997 հունիսի 25): Հեռացավ՝ թողնելով բանաստեղծությունների հսկայական հավաքածու, որպեսզի մարդիկ ճանաչեն իր ներաշխարհը, հուզումներն ու իղձերը, մարդկային մեծ ու փոքր ցանկությունները: «Ուզում եմ, որ ինձ հիշեն իմ ստեղծագործությունների շնորհիվ», մի առիթով ասել էր երիտասարդ բանաստեղծը: Ցավոք, նրա երազանքը մեկ տասնամյակ մնաց անկատար: Բանաստեղծությունները տպագիր կերպով չգնահատվեցին:

Վերջերս հրատարակվել է Սիփան Շիրազի բանաստեղծությունների հատընտիր ժողովածուն, որի շնորհանդեսը կայացավ երեկ Ազգային գրադարանում:

«Տասը տարիները լի էին դատարկությամբ, որովհետեւ զգում էինք նրա բացակայությունը: Յուրահատուկ էր կյանքի, մարդկանց հանդեպ նրա վերաբերմունքը: Ուրախ եմ, որ այդպիսի մարդ է եղել իմ կյանքում: Անտարբեր չէր հասարակության մեջ կատարվող յուրաքանչյուր իրադարձության նկատմամբ: Նա չկա, բայց իր խոսքը կա: Նրա բանաստեղծությունները գրված են արյունով, սրտով: Դա երեւում է բանաստեղծության յուրաքանչյուր տողում», ասաց Արա Շիրազը:

## Գրքի շնորհանդես առանց գրքի՞

Այնպիսի տպավորություն ստեղծվեց, որ Սիփան Շիրազի հատընտիր ժողովածուն հրատարակվել է ընդամենը մի քանի օրինակով: Միջոցառման կազմակերպիչները Ազգային գրադարան էին բերել գրքի ընդամենը մի քանի օրինակ, այն էլ ծանոթ-բարեկամին բաժանելու համար: Լրագրողներին ոչ միայն գիրք չէին հասկացրել, այլեւ ստիպված էինք երկար-բարակ խնդրել, որպեսզի գիրք տրամադրեին՝ բանաստեղծի ստեղծագործություններին ծանոթանալու համար: Վերջապես «ծանոթ-բարեկամներից» մեկից խնդրեցինք գրքի մեկ օրինակ՝ այն էլ մի քանի րոպեով: Հետեւաբար չենք կարող որեւէ տեսակետ ներկայացնել գրքի բովանդակության վերաբերյալ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄՈՍԿՎԱ

# Հայ երիտասարդ ռեժիսորները մասնակցում են Չեխովի անվան միջազգային փառատոնին

Հունիսի 23-30-ը Մոսկվայում կընթանա Չեխովի անվան ութերորդ միջազգային փառատոնը, որի շրջանակներում կազմակերպվել է նաեւ ԱՊՀ անդամ-երկրների երիտասարդ ռեժիսորների լաբորատորիա: Կազմակերպիչը Թատերական միությունների միջազգային կոնֆեդերացիան է, որը ստացել է նաեւ ԱՊՀ անդամ-երկրների հումանիտար համագործակցության միջազգային հիմնադրամի աջակցությունը: Լաբորատորիայի աշխատանքներին մասնակցում է 23 ռեժիսոր Մոլդովայից, Բելառուսից, Ադրբեջանից, Տաջիկստանից, Ուզբեկստանից, Ուկրաինայից: Հայաստանը ներկայացնում է 5 ռեժիսոր՝ Դավիթ Հարությունյանը, Լուսինե Երնջակյանը, Գրիգոր Խաչատրյանը, Ցոլակ Գալստյանը, Սուրեն Շահվերդյանը:

Լաբորատոր դասընթացները «Ռեժիսորի աշխատանքը դերասանի հետ» թեմայով վարելու են թատերական ռեժիսուրայի տարբեր դպրոցների ներկայացուցիչներ՝ Լատվիայից՝ Ադոլֆ Շապիրոն, Ռուսաստանից՝ Կիրիլ Սերեբրյաննիկովը, Մեծ Բրիտանիայից՝ Դեկլան Դոնելլան: Ժամանակակից թատրոնի միտումները կներկայացնի արվեստաբանության դոկտոր Ալեքսեյ Բարտոշեւիչը:

Թատերական միությունների միջազգային կոնֆեդերացիան արդեն մի քանի տարի ԱՊՀ երկրների թատերարվեստի ոլորտում ստեղծագործող երիտասարդների համար իրականացնում է մասնագիտական օգնության ծրագիր: Բացի նշյալ երկրների երիտասարդ թատերական գործիչների ծանոթությունից, ծրագիրը հնարավորություն է ստեղծում ոլորտի խնդիրները լայնորեն քննարկելու, ժամանակակից միտումներին տեղեկանալու եւ դրանք պարզաբանելու համար: Վերջին տարիներին ծրագրին մասնակցել ու վարել են Յուրի Լյուբիմովը, Մարկ Զախարովը, Վալերի Ֆոկինը, Կամա Գինկասը, Անատոլի Վասիլեւը, Սերգեյ Ժենովաչը, Ժակ Լավալը, Հեյներ Գյոբելսը, Պետրիս Շերոն եւ այլք:

Ն. Պ.

# Հայ առաքելական եկեղեցին նշում է Տրդատ թագավորի, Աշխեն թագուհու եւ Խոսրովդուխտ կույսի հիշատակության օրը

Այս տարի հուլիսի 4-ին Հայ Առաքելական եկեղեցին նշում է Սուրբ Տրդատ թագավորի, Աշխեն թագուհու Խոսրովդուխտ կույսի հիշատակության օրը: Տոնի առթիվ հուլիսի 4-ին, ժամը 14.00-ին, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում կբացվի լուսանկարիչ Տիգրան Սահակյանի անհատական ցուցահանդեսը:

Ցուցահանդեսին ներկայացված են լինելու Մեղրիի Ս. Աստվածածին խոնարհված եկեղեցու մանրանկարները, որոնք 18-րդ դարի կեսին նկարել են Հովնաթանյանները: Կադրերը բացառիկ են: Հայաստանի շատ քիչ եկեղեցիներում պահպանվել է պատի վրա մանրանկարչություն:

Հասկանալի է, որ երբ տարիներ առաջ ցանկացել են մանրանկարների գույները թարմացնել նոր ներկերով, ապա ժամանակ անց նոր գույները խունացել են՝ զիջելով հնագույն ներկերի որակին:

Ցուցահանդեսին ներկայացված եկեղեցու այլ լուսանկարներում կա Խոռակերտ եկեղեցին, որը գտնվում է Հայաստանի՝ Ջիլիզա, Վրաստանի՝



Խոռակերտ եկեղեցի

Ջանախչի գյուղերի սահմանին: Այս եկեղեցին մի շարք այլ հայկական եկեղեցիների հետ Վրաստանը պահանջում է ճանաչել իբր վրացական: Նկարահանումներն այս եկեղեցում գաղտնի են կատարվել:

Տոնի մասին Հայ Առաքելական եկեղեցին հետեւյալն է ասում՝ Հայոց Արշակունյաց Տրդատ արքան առաջինն էր աշխարհում, որ 301 թվականին քրիստոնեությունն ընդունեց որպես երկրի պետական կրոն՝ դառնալով քրիստոնեության տարածման մեծագույն ջատագով Հայաստանում: Նրա անվան կողքին պատմությունը հիշատակում է նաեւ Աշխեն թագուհու թագավորաքույր Խոսրովդուխտ կույսի անունը: Խոսրովդուխտի երազի շնորհիվ է, որ Խոր Վիրապի բանտարկությունից դուրս է գալիս Ս. Գրիգոր Լուսավորիչը Քրիստոսի լույսը տարածում հայոց աշխարհում: Ինչպես վկայում է Ագաթանգեղոսը, իրենց արքայի հետ մեկտեղ արքունի երկու տիկնայք ընդառաջ են գալիս Կեսարիայից հայրենիք վերադարձող Սբ. Գրիգոր Լուսավորչին ու ձեռամբ առաջին քահանայապետի մկրտվում Արածանիի ջրերում: Հետագայում հայոց արքան ու թագուհին, բարեպաշտ Խոսրովդուխտն անձամբ մասնակցում են Ս. Էջմիածնի կառուցմանը:

# Նոր դպրոց Արցախի Վաղուհաս եւ Խնկավան համայնքների համար

«Հայաստան» հիմնադրամը դպրոցաշինական ծրագիր է ծավալել Մարտակերտի շրջանի Վաղուհաս համայնքում, որն իրականացվում է ԼՂՀ կառավարության եւ անհատ բարերարների համատեղ հովանավորությամբ. ամենախոշորը գործարար Սամվել Ալեքսանյանի ներդրումն է:

Շուրջ 670 բնակիչ ունեցող Վաղուհաս համայնքի հյուսիս-արեւմտյան տարածքում կառուցվում է երկհարկանի դպրոց, որտեղ կսովորեն նաեւ հարեւան Խնկավան համայնքի դպրոցականները: Դպրոցը նախատեսված է 240 աշակերտի համար: «Վաղուհասը Արցախյան գոյամարտից մեծապես տուժած գյուղերից է:

Համայնքի ղեկավար Գարեգին Ղարախանյանը դպրոցի կառուցումը որակել է որպես Վաղուհասի փոքր համայնքին մեծ հավատ ներշնչող նախաձեռնություն: Նա հույս հայտնեց, որ համայնքի ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքները կշարունակվեն, ու Վաղուհասը կվերագտնի իր երբեմնի աշխուժությունը:

Ս. Ս.

# Գտնվել են հնադարյան երաժշտական գործիքներ

Գերմանական քարանձավներից մեկում գտնվել են մարդկության ստեղծած հնագույն ֆլեյտաները: Գտածոները մոտավորապես 35 հազար տարվա պատմություն ունեն: Ոսկրե ֆլեյտաները հինգ անցք ունեն: Փղոսկրե եւ մամոնտի ոսկորների կտորներ են հայտնաբերվել նաեւ Արեւելյան Գերմանիայի Hohle fels քարանձավում դեռ անցած տարի: Հենց այդ քարանձավում մի քանի մետր ֆլեյտայի հնագիտական կենտրոնից հեռու գտնվել են հնադարյան քանդակներ, որոնք, ինչպես հայտարարվել էր ավելի վաղ, պատկանում են ամենահին էրոտիկ ժամանակաշրջանը ներկայացնող գտածոների շարքին:

Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

# «Արեւորդի» երկրորդ միջազգային փառատոնը տեղի կունենա հոկտեմբերին

«Արեւորդի» բնապահպանական թեմաներով ֆիլմերի երկրորդ միջազգային փառատոնի մասնակցության հայտերի ընդունումը հայտարարված է: Հայտերի ընդունման վերջնաժամկետը հուլիսի 15-ն է: Անվանակարգերը՝ չորսն են. «Վայրի բնության մասին լավագույն ֆիլմ», «Բնապահպանական հիմնախնդրի ուսումնասիրություն», «Լավագույն բնապահպանական ֆիլմ երեխաների համար», «Լավագույն մանկական աշխատանք»: Վերջինում մասնակցություն կարող են ունենալ մինչեւ 16 տարեկան ստեղծագործող երեխաները:

Փառատոնը հիմնադրվել է 2007 թվականին: Հիմնադիրը Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանության հիմնադրամն է: Փառատոնն անց է կացվում երկու տարին մեկ: Այս տարի այն տեղի կունենա հոկտեմբերի 25-29-ը:

Ն. Պ.

# ԲԱՑ ՆԱՄԱԿ

*ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՒԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԱՐ ԳԱԳԻԿ ԲԵԳԼԱՐԵԱՆԻՆ*

Պէյրութ, 20/6/2009,

Յարգելի Տիար Գագիկ Բեգլարեան,
Երեւանի քաղաքապետարան,
Երեւան.

Նախ եւ առաջ կը շնորհաւորեմ Երեւանի քաղաքապետի պաշտօնին Ձեր ընտրութիւնը, որ առաջին անգամ ըլլալով կը կայանար ժողովրդային ընտրութեամբ եւ ոչ թէ նշանակումի: Կը յուսամ եւ կը մաղթեմ որ Ձեր տնօրինութեան տակ, Երեւանի բազմաթիւ կենցաղային ու այլ հարցերը միշտ լուծուին եւ տուֆակերտ հայոց մայրաքաղաքը աշխարհի իւրայատուկ քաղաքներէն մէկը միշտ ըլլայ:

Այս բաց նամակը Ձեզի ուղղելուս պատճառը՝ թէ երեւանցիներուն եւ թէ համայն հայութեան յուզող հարց մըն է:

Հայաստանի անկախութենէն ետք, Երեւանի կեդրոնական հրապարակէն Լենինի արձանին ու անոր պատուանդանին հանուելով եւ այդ հրապարակն ալ «Հանրապետութեան» անուանափոխուելով, առ այսօր այդ արձանին ու պատուանդանին տեղը թափուր է:

Մամուլէն իմացանք թէ այդ բաց տեղը լեցնելու համար մրցանք յայտարարուած է: Նաեւ առաջարկներ եղան այլեւայլ ազգային անձնաւորութեանց արձանները զետեղելու այնտեղ: Անձնապէս իմ նախընտրութիւնս միշտ ըլլար Ազգային հերոս Զօր. Անդրանիկի արձանին կանգնեցնելը հոն:

Սակայն նկատի ունենալով հարցին համահայկական կարեւորութիւնը, Երեւանի սիրտին վրայ պէտք է տեղադրուի այնպիսի գեղեցիկ ու աչքառու խորհրդանշան մը, որ անառարկելիօրէն համայն հայութեան կողմէ ընդունելի ըլլայ իբր ազգային խորհրդանիշ:

Ամիսներ առաջ Հայաստանի հեռատեսիլի ալիքներէն մէկուն վրայ (կարծեմ Հ1-ն է), կը հեռասփռուէր հարցազրոյց մը՝ վերջերս մահացած արուեստաբան Հենրիկ Իգիթեանի հետ, ուր ան պարզորոշ կերպով կ՛ըսէր թէ Երեւանի սիրտին վրայ պէտք է կանգնի հայոց դիւցազնավէպի հերոս Սասունցի Դաւիթի արձանը, որ գործն է տաղանդաւոր արուեստագէտ, վարպետ Երուանդ Քոչարի:

Կը կարծեմ որ այս մէկը լաւագոյն առաջարկն ու լուծումն է այդ հարցին:

Այս բաց նամակով կը դիմեմ Ձեզ եւ Երեւանի ընտրեալ Աւագանիին, որոնց մէջ բազմաթիւ հանրածանօթ ու տաղանդաւոր երեւանցիներ կան, որպէսզի համահայկական կարեւորութիւն ունեցող որոշում կայացնէք եւ հանճարեղ Երուանդ Քոչարին Սասունցի Դաւիթի արձան կոթողը՝ Երեւանի կայարանի հրապարակին անշուքութենէն հանելով բերել տաք ու Երեւանի սրտին վրայ կանգնեցնէք, այդպիսով թէեւ ուշ, բայց նաեւ արժանին հատուցած ըլլալով վարպետս, այդպիսով նաեւ հաստատելով անմահին Պարոյր Սեւակի այն տողը, որ արդէն Երեւանի պաշտօնական քայլերգը դարձած Երեւան-Էրեբունիին մէջ է, ուր կ՛ըսէ, «Դարեր են անցել բայց մնացել ես պատանի», որով այսպէսով մեր տառապալից պատմութեան դարաւոր շղթային բաց մնացած մէկ օղակն ալ կ՛ամբողջանայ այդ ձեւով:

Սասունցի Դաւիթի այդ արձանին Երեւանի սրտին վրայ տեղադրումով, մեր ազգի դարաւոր գոյատեւման պայքարի պատմութիւնը, նաեւ ինքնաբերաբար մատչելի կ՛ըլլայ օտարներուն, որոնք ամենէն շատ Երեւանի կեդրոնին մէջ կ՛ըլլան երբ Հայաստան այցելեն:

Կը յուսամ, որ հանգուցեալ արուեստաբան Հենրիկ Իգիթեանի ըսածին կրկնութեամբ այս առաջարկս, որ վստահ եմ բազմամիլիոն հայութեան ալ սրտին մօտ է, Ձեր ու Երեւանի Աւագանիին պատշաճ ուշադրութեան կ՛արժանանայ եւ այս հարցը բարւոք լուծում կը գտնէ ի փառս հայութեան ու Հայաստանի, իր հինաւուրց մայրաքաղաք Երեւանի կեդրոնին աւելի եւս փառաշուք դառնալով:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով՝

*ՅՈՎՍԷՓ ԱՐԹԻՆԵԱՆ*
*Երեւանի Պետական Համալսարանի Հայկական Բանասիրական Բաժանմունքի 1982ի շրջանաւարտ, «Սփիւռք» պարբերաթերթի նախկին խմբագիր*

AZG NEW 7.QXD 6/25/2009 11:15 PM Page 1





# Օլիմպիական չեմպիոնները հաստատեցին իրենց կարգը

*Հայաստան-Ֆրանսիա՝ 19,5-12,5*

Շախմատի Հայաստանի հավաքականը մեկ անգամ եւս հաստատեց իր բարձր կարգը՝ 19,5-12,5 ընդհանուր հաշվով առավելության հասնելով Ֆրանսիայի ընտրանու նկատմամբ: Եթե նախորդ օրը կայացած չորս տուրերից երկուսն ավարտվել էր հայ շախմատիստների հաղթանակով, մեկում գրանցվել էր ոչ-ոքի, մեկում էլ հաղթել էին ֆրանսիացիները, ապա երեկ Հայաստանի հավաքականը բոլոր չորս տուրերում էլ մրցակցի նկատմամբ առավելության հասավ միեւնույն 2,5-1,5 հաշվով:



5-րդ տուրում առաջինը մեր թիմին միավոր բերեց Վլադիմիր Հակոբյանը՝ պարտության մատնելով Ժոել Լոթյեին: Իր ավագ ընկերոջ օրինակին հետեւեց նաեւ Տիգրան Պետրոսյանը՝ հաղթելով Լորեն Ֆրեսինեին: Լեւոն Արոնյանը հաշտություն կնքեց Մաքսիմ Վաշիե-Լագրավի հետ, իսկ ահա Գաբրիել Սարգսյանը պարտվեց Քրիստիան Բաուերին:

6-րդ տուրում մեր հավաքականի ընդհանուր հաղթանակն ապահովեց Գաբրիել Սարգսյանը՝ պարտության մատնելով Լորեն Ֆրեսինեին: Լագրավ-Պետրոսյան, Արոնյան-Լոթյե, Բաուեր-Հակոբյան պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

7-րդ տուրում մեր թիմից հաղթեցին Արոնյանն ու Պետրոսյանը՝ պարտության մատնելով համապատասխանաբար Բաուերին ու Լոթյեին: Սարգսյանը հաշտություն կնքեց Լագրավի հետ, իսկ Հակոբյանը զիջեց Ֆրեսինեին:

8-րդ տուրում եւս հայ շախմատիստներն իրենց օգտին երկու հաղթանակ գրանցեցին: Աչքի ընկան Պետրոսյանն ու Սարգսյանը՝ հաղթելով համապատասխանաբար Բաուերին եւ Լոթյեին: Հակոբյան-Լագրավ պարտիան ավարտվեց ոչ-ոքի, իսկ ահա Արոնյանը զիջեց Ֆրեսինեին, որին նախորդ օրը հաղթել էր: Ի դեպ, դա մրցաշարում Լեւոնի անդրանիկ պարտությունն էր:

Հայաստանի հավաքականի կազմում առավել հաջողը Տիգրան Պետրոսյանի ելույթն էր, որը 8 հնարավորից վաստակեց 6 միավոր: Նա տոնեց 5 հաղթանակ, 2 պարտիա ավարտեց ոչ-ոքի, կրեց մեկ պարտություն: Մեր մյուս շախմատիստները վաստակեցին հավասար՝ 4,5-ական միավոր: Նրանցից յուրաքանչյուրը մեկական պարտություն կրեց, տոնեց 2-ական հաղթանակ, 5-ական պարտիա ավարտեց ոչ-ոքի:

Ֆրանսիացիներից լավագույն արդյունքը ցույց տվեց Մաքսիմ Վաշիե-Լագրավը՝ վաստակելով 4,5 միավոր: Ընդ որում նա մրցաշարի մասնակիցներից միակն էր, որ չպարտվեց: Ֆրեսինեն ու Բաուերը վաստակեցին 3-ական միավոր, Լոթյեն իր օգտին 2 միավոր գրանցեց:

# Եվրոգավաթների մեկնարկի շեմին հայկական ակումբները փորձում են ուժեղացնել կազմերը

Ինչպես տեղեկացրել ենք, ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խաղարկության առաջին փուլի վիճակահանությամբ «Միկան» եւ «Բանանցն» առաջին հանդիպումները պետք է անցկացնեին մրցակցի դաշտում: ՈւԵՖԱ-ն հաշվի առնելով, որ երկու թիմերն էլ ներկայացնում են Երեւանը, փոփոխել է խաղերի հերթականությունը.



Ֆոտոլուր

Ըստ դրա, հուլիսի 2-ին «Բանանցը» Բոսնիա Հերցեգովինայի «Շիրոկի բրիեգին» հյուրընկալելու է սեփական հարկի տակ: Խաղը կայանալու է «Հանրապետական» մարզադաշտում, ժամը 20-ին:

Առաջիկա հանդիպմանը լավ նախապատրաստվելու համար հունիսի 28-ին «Հրազդանում» «Կիլիկիայի» հետ կայանալիք առաջնության խաղը տեղի կունենա մեկ օր շուտ: Եվրոգավաթների մեկնարկի շեմին «Բանանցը» կազմի հետ կապված լուրջ խնդիրներ ունի: Մի խումբ ֆուտբոլիստներ վնասվածքներ ունեն: Նրանցից թերեւս միայն Սարգիս Կարապետյանն ու Արսեն Բալաբեկյանը հասցնեն ապաքինվել:

«Բանանցի» մարզիչներն այս օրերին թիմի կազմն ուժեղացնելու շտապ միջոցներ են ձեռնարկել: Ինչպես տեղեկացրել ենք, Եվրոպայի լիգայի հանդիպումներում «Բանանցի» կազմում հանդես կգա 36-ամյա Համլետ Մխիթարյանը, որը խաղում է Իրանում: Դոնեցկի «Մետալուրգից» թիմ են հրավիրվել կենտրոնական պաշտպան Դմիտրի Նազարենկոն եւ հենակետային կիսապաշտպան Վլադիմիր Ռոմանենկոն: Փորձարկվում են ֆուտբոլիստներ Բրազիլիայից, Սենեգալից, Զիմբաբվեից, Ռումինիայից եւ նույնիսկ Բենինից: Թե ովքեր կհամալրեն «Բանանցը», այժմ դժվար է ասել:

Սակայն դա հարցի մի կողմն է: Իսկ որքանո՞վ ձեռնարկված այդ քայլերը կնպաստեն թիմի հաջող ելույթներին եվրոգավաթների հանդիպումներում: Սովորաբար եվրոգավաթների մասնակից հայկական թիմերը միայն վերջին պահին են կարծես բացահայտում, որ կազմն ուժեղացնելու կարիք է զգացվում: Իսկ հապճեպ ձեռնարկվող քայլերը որպես կանոն ոչ մի արդյունքի չեն բերում: Հրավիրված ֆուտբոլիստների մեծամասնությունն էլ եվրոգավաթների խաղերից հետո վերադառնում են իրենց հայրենիքը:

Այս առումով ընթացիկ մրցաշրջանում բացառություն է կազմում «Միկան», որն առաջնության մեկնարկից առաջ էր զգալիորեն համալրել կազմը եւ իր ներկայիս կադրերով է պատրաստվում դիմագրավել շվեդական «Հելսինգբորգին»: Իսկ ահա «Գանձասարի» վիճակն իրոք մտահոգիչ է: Տրանսֆերային պատուհանի բացման ժամանակ թիմի ղեկավարությունը շտապ կարգով պետք է համալրի կազմը: Իսկ դա լավատեսության հիմքեր չի տալիս:

Երկրի չեմպիոն «Փյունիկն» էլ ամեն ինչ անում է Զագրեբի «Դինամոյին» արժանի մրցակցություն ցույց տալու համար: Ինչ խոսք, «Փյունիկի» համար մեծ կորուստ է Հենրիխ Մխիթարյանի բացակայությունը: Կարծում ենք, որ բրազիլացի Մարկոսը կարող է լրացնել այդ բացը: Խաղային մյուս օղակներում եւս «Փյունիկը» մտադիր է համալրել կազմը լեգեոնականներով: Թե ինչ արդյունք կտան կազմերն ուժեղացնելու մեր թիմերի ջանքերը, ցույց կտան եվրոգավաթների հանդիպումները:

# Շարապովան դուրս մնաց պայքարից

Թենիսի Ուիմբլդոնի մրցաշարի 2-րդ փուլում տղամարդկանց մրցաշարի հաղթողի գլխավոր հավակնորդներից մեկը՝ Ռոջեր Ֆեդերերը երեք խաղափուլերում էլ առավելության հասավ Գիյերմո Գարսիա-Լոպեսի նկատմամբ: Հաջորդ փուլ մտան նաեւ Իգոր Անդրեեւը, Թոմի Հաասը, Թոմի Ռոբրեդոն, Մարդի Ֆիշը, Ֆեռնանդո Վերդասկոն, Ռոբին Սոդերլինգը:

Կանանց մրցաշարի հաղթողի հավակնորդներից մեկը՝ ռուսաստանցի Մարիա Շարապովան չկարողացավ հաղթահարել 2-րդ փուլի արգելքը: Նա պարտվեց արգենտինացի Խիսելա Դուլկոյին: Իսկ ահա Շարապովայի հայրենակցուհիներ Վերա Զվոնարյովան, Ելենա Վեսնինան, Ռեգինա Կուլիկովան, Ելենա Դեմենտեւան, Նադեժդա Պետրովան հաղթելով մրցակիցներին, մտան հաջորդ փուլ: Այստեղ հանդես կգա նաեւ Սերենա Ուիլյամսը, որը պարտության մատնեց Յարմիլա Գրոտին:



# Հայաստանցիներից լավագույնը Փաչիկյանի արդյունքն է

Շախմատի Թբիլիսիի գավաթի խաղարկության հաղթող դարձավ վրացի գրոսմայստեր Բայադուր Ջոբավան, որը 9 հնարավորից վաստակեց 8 միավոր: Հաղթողի հարցը վճռվեց ավարտական տուրում: Ջոբավան ուներ 7 միավոր, իսկ երեք շախմատիստներ՝ Դավիթ Հարությունյանը, Նանա Ձագնիձեն եւ Մերաբ Գագունաշվիլին վաստակել էին 6,5-ական միավոր: Ջոբավան սպիտակներով հաղթեց Դավիթ Հարությունյանին, իսկ մյուս երկու առաջատարները միմյանց հետ հաշտություն կնքեցին:

Արդյունքում Ջոբավան վաստակեց 8 միավոր, իսկ 9 շախմատիստ 7-ական միավորով հաջորդեցին նրան: Հայաստանցի շախմատիստներից առավել հաջող խաղաց հանրապետության այս տարվա չեմպիոն Արման Փաչիկյանը, որը 6,5 միավորով զբաղեցրեց 11-րդ տեղը: 8-րդ տուրում նա հաղթեց Միխեիլ Ջամագիձեին, իսկ ավարտական պարտիան Գեորգի Մարգվելաշվիլու հետ ավարտեց ոչ-ոքի: Վրաստանը ներկայացնող Դավիթ Հարությունյանը 6,5 միավորով 13-րդն է:

Հայաստանցի շախմատիստներից 2-րդ արդյունքը ցույց տվեցին Դավիթ Պետրոսյանը, Լեւոն Բաբուջյանը, Վարդգես Թովմասյանը եւ Սուրեն Պողոսյանը, որոնք վաստակեցին 6-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով նրանցից ամենաբարձր տեղը (20-րդ) գրավեց Դավիթ Պետրոսյանը: 5,5 միավոր վաստակեց Գեւորգ Հարությունյանը, 5-ական՝ Տիգրան Քոթանջյանը, Տիգրան Սիմոնյանը եւ Աղասի Ինանցը:

# Հաղթողի հարցը վճռված է

Ռումինիայում ընթացող շախմատի միջազգային մրցաշարի ավարտից մեկ տուր առաջ ուկրաինացի գրոսմայստեր Վասիլի Իվանչուկն ապահովել է 1-ին տեղը: Ոչ-ոքի խաղալով Կամսկու հետ, նա վաստակեց 6,5 միավոր եւ մեկ միավորով առաջ անցավ Բորիս Գելֆանդից: Վերջինս եւս հաշտություն կնքեց՝ միավորը բաժանելով Շիրովի հետ: Ոչ-ոքի ավարտվեց նաեւ Նիսիպյանու-Ռաջաբով պարտիան: Ավարտական տուրում Իվանչուկը սեւերով կխաղա Ռաջաբովի հետ, իսկ Գելֆանդի մրցակիցը կլինի Կամսկին:

# Իսպանացիների ռեկորդային շարքն ընդհատվեց

Ֆուտբոլի ԱՄՆ-ի հավաքականը խոշոր անակնկալ մատուցեց՝ Կոնֆեդերացիաների գավաթի խաղարկության կիսաեզրափակիչում 2-0 հաշվով առավելության հասնելով Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի ընտրանու նկատմամբ: Ամերիկացիների հաղթանակն ապահովեցին Էլտիդորի եւ Դեմպսիի խփած գոլերը: Այսպիսով, ԱՄՆ-ի հավաքականին հաջողվեց ընդհատել իսպանացիների 35 խաղից բաղկացած անպարտելի խաղերի շարքը եւ թույլ չտալ նրանց այս ցուցանիշով գերազանցելու բրազիլացիների ռեկորդը: Նշենք նաեւ, որ իսպանացիները վերջին 15 հանդիպումներում հաղթել էին մրցակիցներին, ինչը համաշխարհային նոր ռեկորդ է: Իսպանիայի ընտրանին վերջին անգամ պարտվել էր 2006-ի նոյեմբերին՝ ընկերական խաղում զիջելով ռումինացիներին:

Չնայած պարտությանը, իսպանացիների գլխավոր մարզիչ Վիսենտե դել Բոսկեն գտնում է, որ հավաքականը նախկինի պես ուժեղագույններից մեկն է աշխարհում. «Իհարկե, պարտվելը միշտ էլ տհաճ է, մանավանդ, որ երկար ժամանակ պարտություն չէինք կրել: Այժմ ողջ ուշադրությունը կբեւեռենք 3-րդ տեղի համար մրցախաղում հաջող հանդես գալու համար, իսկ հետո կնախապատրաստվենք ընտրական հաջորդ հանդիպումներին: Գտնում եմ, որ ամերիկացիների հետ արժանի խաղ ցուցադրեցինք եւ ամեն ինչ արեցինք հաղթելու համար: Սակայն չկարողացանք օգտագործել գոլային պահերը: Պարտության մտքի հետ պետք է համակերպվել, սակայն դա չի նշանակում, թե այլեւս ուժեղագույններից մեկը չենք աշխարհում»:

# Շաքիլ Օ՛Նիլը կմիանա Լեբրոն Ջեյմսին



ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային ընկերակցության առաջնության մասնակից «Կլիվլենդը» պայմանավորվածություն է ձեռք բերել «Ֆինիքսի» հետ Շաքիլ Օ՛Նիլի տեղափոխման հարցում: Փոխարենը «Կլիվլենդ» կտեղափոխվեն Բեն Ուոլեսը եւ Սաշա Պավլովիչը: Շաքիլ Օ՛Նիլի տեղափոխությանը հավանություն է տվել «Կլիվլենդի» առաջատար Լեբրոն Ջեյմսը:

Օ՛Նիլը «Ֆինիքսում» տարեկան 37 մլն դոլար էր վաստակում եւ թիմից նրա հեռանալը հնարավորություն կընձեռի զգալիորեն թեթեւացնել ակումբի ֆինանսական վիճակը:

# Մուսավիի կողմնակիցները հեռացվեցին հավաքականից

Իրանի ազգային հավաքականի չորս ֆուտբոլիստներ՝ Ալի Քարիմին, Մեհդի Մահդավիկիան, Հոսեյն Կաաբին եւ Վահիդ Հաշեմյանը ցմահ հեռացվել են հավաքականից այն բանի համար, որ Հարավային Կորեայի ընտրանու հետ Սեուլում կայացած ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցախաղում խաղադաշտ են դուրս եկել կանաչ թեւկապներով: Նման եղանակով նրանք իրենց բողոքն են հայտնել երկրի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի դեմ: Նշենք, որ կանաչ գույնը խորհրդանշում է Իրանի նախագահի ընտրությունների քարոզարշավում ընդդիմադիր թեկնածու Մուսավիի կողմնակիցներին: Այդ խաղում ընդհանուր առմամբ իրանցի 6 ֆուտբոլիստներ էին կանաչ թեւկապներով խաղադաշտ դուրս եկել: Ընդմիջմանը նրանցից հինգը հավաքականի ղեկավարության պահանջով հանել էին թեւկապները: Իսկ ահա թիմի ամենափորձառու ֆուտբոլիստ, 32-ամյա Մահդավիկիան չէր ենթարկվել պահանջին:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW 8.QXD 6/25/2009 10:58 PM Page 1





ԳՅՈՒՄՐԻ

# Մի խումբ շինարարներ բողոքում են թերավճարումներից, իսկ «Գլենդել Հիլզ»-ը բոլոր մեղադրանքները ժխտում է

Երկրաշարժից անօթեւան ընտանիքների համար Գյումրու «Մուշ-2» թաղամասում իրականացվող պետական բնակարանաշինության աշխատանքներում ներգրավված 12 շինարարներ երկուշաբթի օրվանից հրաժարվել են աշխատելուց, որի պատճառները ներկայացրին երեկ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հրավիրած մամուլի ասուլիսում: Ըստ շինարարների՝ իրենց հետ աշխատանքային պայմանագրեր կնքած գործատուն՝ Երեւանի «Ի Էմ Էյջ Ինվեսթմենթ» ՓԲԸ-ն կոպտորեն ոտնահարում է երկկողմ պայմանագրերի դրույթները՝ կապված իրենց հատկապես աշխատանքի վարձատրության եւ աշխատանքային օրվա տեւողության հետ: Ասուլիսում ելույթ ունեցողները մասնավորապես նշեցին, թե աշխատանքային պայմանագրերի համապատասխան կետով նախատեսված 150-160 հազար դրամ ամսական աշխատավարձը, ըստ պայմանագրի նույն կետի, յուրաքանչյուր ամիս պետք է հաշվարկվեր եւ վճարվեր մինչեւ հաջորդ ամսվա 15-ը, այնինչ իրենք մինչ օրս վճարվել են ամսական մոտ 45-52 հազար դրամ, այն էլ 10-20 հազարանոց մասնաբաժիններով: Այս վճարումների դիմաց էլ շինարարներին ստորագրել են տվել ոչ թե սահմանված կարգով կազմված ռոճիկացուցակներում, այլ ինչ-որ թղթերի վրա: Ընդսմին մինչեւ օրս չի հաշվարկվել ու չի վճարվել նաեւ գործատուի մեղքով աշխատավարձի ուշացման համար պայմանագրով սահմանվող տույժը:

Պայմանագրերի համապատասխան կետերով աշխատանքային օրը սահմանվել է որպես նորմավորված, աշխատաժամանակի նորմալ տեւողությունը՝ շաբաթական 40 ժամից ոչ ավելի, այնինչ, ինչպես ներկայացվեց ասուլիսում, մարդիկ աշխատել են շաբաթական 58-65 ժամ:

Բողոքող շինարարներից ոմանք, որոնցից մեկը հարազատ քաղաքում աշխատելու համար վերադարձել է Ռուսաստանից, նշում էին, թե իրենք ցանկանում էին տեղում վաստակել ու միաժամանակ օգտակար լինել հայրենի քաղաքին, սակայն այժմ հիասթափված են եւ չէին ուզենա նման պայմաններում աշխատել: Նրանք նաեւ դիմել են «Ասպարեզ» ակումբին կից գործող՝ Շահերի պաշտպանության եւ աջակցման Շիրակի մարզային հակակոռուպցիոն կենտրոն՝ իենց օրինական իրավունքների պաշտպանության խնդրանքով:

Մինչ պատրաստում էինք այս տեղեկատվությունը, ստացվեց Գյումրիում իրականացվող շինարարության հիմնական կապալառու «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի հանրության հետ կապերի եւ տեղեկատվության վարչության մամուլի հաղորդագրությունը՝ «Շինարարները թերացել են, բայց բողոքո՞ւմ են» վերնագրով, իբրեւ արագ արձագանք հիշյալ ասուլիսի: «Ինչպես հայտնի է,- նշվում է հաղորդագրությունում,- «Գլենդել Հիլզ» ընկերությունը խմբի անդամ ընկերությունների հետ միասին իրականացնում է «1988 թվականի երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների համար բնակարանաշինության պետական ծրագիրը»: Բնակարանների շինարարությունն ընթանում է լայն թափով, Գյումրիի Մուշ թաղամասի շուրջ 210 500 քմ տարածք զբաղեցնող շինհրապարակում արդեն վեր են խոյանում (՞-Գ. Մ.) 22 շենքեր: Այսօր մեր ընկերության Գյումրիի շինարարությունում աշխատում է մոտ 700 շինարար, եւս 1000 մարդ մեր ընկերությունից աշխատանք է ակնկալում... Եվ չնայած մեր ընկերության կողմից իրականացվող շինարարությունը բարեհաջող ընթանում է, այսօր Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբի կողմից հաղորդագրություն է տարածվել մի քանի շինարարների բողոքի մասին, որում նշված կետերի հիմնավորվածությունը «Գլենդել Հիլզ» ընկերությունն ամբողջությամբ հերքում է»: Հաղորդագրության մեջ մասնավորապես նշվում է, թե պայմանագրով նշված ամբողջ գումարն աշխատակցին վճարվում է պայմանագրով նշված աշխատանքի ծավալն ամբողջությամբ կատարելու դեպքում, հակառակ պարագայում նրա աշխատանքի համամասնական բաժինն է վճարվում: Ժխտելով աշխատավարձերի ուշացումների եւ այլ մեղադրանքներն ու աշխատանքային սահմանված ժամերից ավելի աշխատելը պայմանավորելով տվյալ շինարարների պրոֆեսիոնալիզմի պակասով, աշխատանքը չիացնելով, «Գլենդել Հիլզ» ընկերությունը ողջունել է «իրենց իրավունքները իրավական հարթությունում պաշտպանելու շինարարների նախաձեռնությունը», ավելացնելով, թե «յուրաքանչյուր պայմանագիր ունեցող շինարար, եթե կատարել է իր պարտավորությունները, կարող է դիմել դատարան՝ լրատվամիջոցներին իրականությանը չհամապատասխանող տեղեկություններով մոլորեցնելու փոխարեն»:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Կառավարության նիստում

## Բյուջետային երաշխիքներ տրվեցին եւս 3 կառուցապատողների

**Շինարարական 3 ընկերություններ կառավարության որոշմամբ երեկ ստացան պետական երաշխիքներ իրենց կառուցած շինություններն ավարտին հասցնելու նպատակով: Դրանցից առաջինը «Լեւոն Ամիրխանյան» ընկերությունն է, որին տրվեցին 960 մլն դրամի պետական երաշխիքներ՝ «Պրոմեթեյբանկից» վարկային միջոցներ ներգրավելու նպատակով, երեք տարի մարման ժամկետով, Երեւանի Սայաթ-Նովա 40 հասցեում կառուցվող բազմաֆունկցիոնալ շենքն ավարտին հասցնելու համար: Նույն պայմաններով, «Ինեկոբանկից» վարկային միջոցներ ներգրավելու նպատակով, 3 մլն դոլարին համարժեք դրամ տրամադրվեց «Մ. Գ - Հաուզինգ» ընկերությանը՝ Ամիրյան 4/14 եւ 4/24 կառուցվող բազմաֆունկցիոնալ շենքերի շինարարությունն ավարտին հասցնելու համար եւ «Հերմեկ» ընկերությանը՝ «ՎՏԲ Հայաստան» բանկից վարկեր ներգրավելու նպատակով, 1 մլն դոլարին համարժեք դրամ, Արամի 82 եւ 84 հասցեներում կառուցվող բնակելի շենքերի շինարարությունն ավարտելու համար:**

## Բյուջետային վարկեր հանքարդյունաբերական կոմբինատներին

**Հանքարդյունաբերության ոլորտի զարգացումը խթանելու նպատակով երեկ կառավարությունը որոշեց «Զանգեզուր մայնինգ», «Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» եւ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ընկերություններին տրամադրել ընդհանուր առմամբ 44 մլն դոլար վարկային միջոցներ նրանց ներկայացրած բիզնես ծրագրերը ֆինանսավորելու համար: «Զանգեզուր մայնինգին» կտրամադրվի 10 մլն դոլար՝ 5 տարվա մարման ժամկետով, «Արմենիան մոլիբդեն փրոդաքշնին»՝ 15 մլն դոլար՝ 5 տարվա ժամկետով եւ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատին»՝ 14 մլն դոլար՝ 4 տարվա մարման ժամկետով:**

## Ռուսական վարկը կիրացվի երեք խոշոր բաղադրիչներով

**Ռուսական վարկի միջոցների հաշվին տնտեսության վարկավորման 90 մլն դրամ արժեքով ծրագիրը երեկ հաստատվեց կառավարությունում: Այն կունենա երեք հիմնական բաղադրիչներ: Առաջինը՝ 60,5 մլրդ դրամ կուղղվի բանկային համակարգին վարկավորելու համար հիպոթեկային շուկան (12 մլրդ դրամ), արտահանումը խթանող, վերամշակող եւ այլ ոլորտներին (30 մլրդ դրամ), փոքր եւ միջին ձեռնարկատիրությանը (18,5 մլրդ դրամ): Երկրորդ բաղադրիչը 6,4 մլրդ դրամ՝ կհատկացվի դարձյալ ՓՄՁ ֆինանսավորմանը ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի կողմից, երրորդը՝ 23,1 մլրդ դրամ խոշոր համակարգաստեղծ ձեռնարկություններին վարկավորելու համար: Եվս 4,7 մլրդ դրամ կհատկացվի ՓՄՁ ԶԱԿ-ին այլ ծրագրերի համար:**

Ա. Մ.


### Հայտարարություն

Հունիսի 29-ին, ժամը 11:00-ին **ՀՀ բնապահպանության նախարարությունը, «Կոկակաբանա» ՍՊԸ**, կազմակերպում են հասարակական լսումներ Գեղարքունիքի մարզում՝ Սեւանի թերակղզու հարավային ափամերձ հատվածում նախատեսվող «Կոկակաբանա» ՍՊԸ հանգստի գոտու շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում:



«ԱԿՍՈՆ» ԱՀ բորսան 2009-ի հուլիսի 1-ից իրականացնելու է 1991 թ. արտադրության «Մերսեդես Բենց 300 SE» օգտագործված մարդատար ավտոմեքենայի աճուրդային վաճառք:

Մեկնարկային գինը 1.900.000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 56-45-13 կամ նամակագրել e-mail: sayadyanarmen@rambler.ru



ԾԱՆՈՒՑՈՒՄ

ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Մարտունի քաղաքում բանկի մասնաշենքի կառուցման մրցույթ: Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (0264) 2 32 62 («Գեղարքունիք» մասնաճյուղ), (0262) 4 77 72 («Մարտունի» մասնաճյուղ) հեռախոսահամարներով կամ այցելել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ «Գեղարքունիք» մասնաճյուղ, ք. Գավառ, Բոշնաղյան փ. 6 հասցեով եւ «Մարտունի» մասնաճյուղ, ք.Մարտունի, Երեւանյան 26 հասցեով՝ ժամը 11:00-16:00-ը (աշխատանքային օրերին):

Մրցույթի անցկացման ժամկետն է հունիսի 22-հուլիսի 5:

ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Մարալիկ քաղաքում բանկի մասնաշենքի կառուցման մրցույթ: Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (0312) 4 79 90 հեռախոսահամարով կամ այցելել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ «Շիրակ» մասնաճյուղ ք. Գյումրի, Շիրակացու 18ա հասցեով՝ ժամը 10:00-17:00-ն (աշխատանքային օրերին):

Մրցույթի անցկացման ժամկետն է հունիսի 24-ից մինչեւ հուլիսի 6-ը:



HIGH-LEVEL E.U.
ADVISORY GROUP TO ARMENIA

UNDP

External Vacancy Announcement

The European Union will deploy a team of high-level EU Advisers (EU Advisory Group) in selected key Armenian administrations to support the implementation of the EU-Armenia European Neighbourhood Policy Action Plan.

The EU Advisory Group will work closely with the Armenian authorities to support their reforms agenda towards democracy, good governance, rule of law and market economy. Specifically, the EU Advisors will provide high-level political and technical advice to design, steer and implement reforms aiming at strengthening the capacity of the Presidency, the Legislative, and Executive and Judiciary powers of Armenia in line with the ENP AP.

The Programme is fully funded by EC and implemented by UNDP. The following position is now open for qualified and experienced candidates.

**1. Local Communications Expert VA 013-09-HR**

Please visit **http://www.undp.am/?page=Jobs** to obtain full Terms of Reference, application procedures and requirements.

Applications can be submitted through **http://oc.undp.am/?go=vacancies**, or delivered hard copies to the UN House Security Desk, 14, P. Adamyan str.

**Please clearly indicate in your application the title of the position and the VA Number**

A complete application form should consist of a letter of motivation, full CV, copies of diplomas. Incomplete applications will not be considered. Only short listed applicants will be contacted.

**Date advertised: 24 June 2009**

**Application Deadline: 7 July 2009, 18:00**

### Հայտարարություն

Եվրամիութունը Հայաստանյան ընտրված գլխավոր գերատեսչություններում ձեւավորելու է Եվրամիության բարձր մակարդակի Խորհրդատուների թիմ (Եվրամիության խորհրդատվական խումբ) սատարելու համար Եվրամիություն-Հայաստան Եվրոպական հարեւանության քաղաքականության գործողությունների ծրագրի իրականացումը:

Եվրամիության խորհրդատվական խումբը սերտորեն աշխատելու է Հայաստանի իշխանությունների հետ աջակցելու համար բարեփոխումների նրանց օրակարգն ուղղված ժողովրդավարությանը, լավ կառավարմանը, օրենքի իշխանությանն ու շուկայական տնտեսությանը: Եվրամիության Խորհրդատուները հատկապես բարձր մակարդակի քաղաքական եւ տեխնիկական խորհրդատվություն կտրամադրեն բարեփոխումներ մշակելու, ուղղորդելու եւ իրականացնելու համար՝ նպատակ ունենալով ուժեղացնել Հայաստանում նախագահական համակարգի, Օրենսդրական, Գործադիր եւ Դատական իշխանությունների կարողությունները Եվրոպական հարեւանության քաղաքականության գործողությունների ծրագրին համահունչ:

Ծրագիրն ամբողջապես ֆինանսավորվում է Եվրահանձնաժողովի կողմից եւ իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի կողմից: Հետեւյալ աշխատատեղը այժմ թափուր է հմուտ եւ փորձառու թեկնածուների համար.

**1. Հաղորդակցության գծով տեղական փորձագետ VA 013-09-HR**

Աշխատանքի ամբողջական նկարագրին, աշխատանքին դիմելու ընթացակարգին եւ պահանջներին ծանոթանալու համար խնդրում ենք այցելել **http://www.undp.am/?page=Jobs** ինտերնետային կայքը:

Դիմումները կարելի է հանձնել ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի պահակակետում (Երեւան, Պետրոս Ադամյան 14) կամ տեղադրել **http://oc.undp.am/?go=vacancies** ինտերնետային կայքում:

**Խնդրում ենք ձեր դիմումի մեջ հստակորեն նշել պաշտոնի անվանումը եւ թափուր տեղի հայտարարության համարը:**

Ամբողջական դիմումը պետք է ընդգրկի ուղեկցող նամակ, ինքնակենսագրություն (CV) դիպլոմների/հավաստագրերի պատճեններ: Թերի դիմումները հաշվի չեն առնվի: Հաջորդ փուլի համար կիրավիրվեն միայն ընտրված թեկնածուները:

**Հայտարարման օրը. 2009, հունիսի 24**

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը. 2009, հուլիսի 7, 18:00**


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 25.06.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: